


## Յայտարարություն

### Ապրիլ 24-ին Լոս Անճելըսի Մեջ Տեղի Կ'ունենայ Քայլարշավ՝ Արդարության Համար

Հայոց Ցեղասպանության 103-րդ տարելիցին առթիվ, այս տարի եւս Լոս Անճելըսի մեջ տեղի պիտի ունենայ քայլարշավ:

Հայոց Ցեղասպանության Յանձնաժողովը, որուն մաս կը կազմեն Հարաւային Քալիֆորնիոյ հայ համայնքի հիմնական հոգեւոր, քաղաքական, բարեսիրական, երիտասարդական եւ մշակութային կազմակերպութիւնները կը յայտարարէ, որ Ապրիլի 24, 2018, կ'եսորուայ ժամը 12-ին տեղի պիտի ունենայ «Արդարութիւն Համար Քայլարշավ», սկսելով Pan Pacific Park-էն եւ ուղղուելու դէպի Լոս Անճելըսի Թուրքական հիւպատոսարան:



100-ամեակի առթիւ կազմուած համազարուքային մեր մարմինի կոչերուն ընդառաջելով 160 հազար հայեր մասնակցեցան թրքական հիւպատոսարանի առջեւ տեղի ունեցած հաւաքին, բողոքելու Անգարայի ժխտողական քաղաքականութեան դէմ եւ Ցեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան իրենց խօսքը հասցնելու Ամերիկեան պետական շրջանակներուն եւ հասարակութեան:

Յաջորդող տարիներուն եւս մեր համայնքը նոյն թափով շարունակեց ներկայացնել իր պահանջները՝ յանուն արդարութեան եւ մարդակային իր իրաւունքներուն:

103-ամեակի առթիւ կոչուած ենք դարձեալ ցոյց տալու մեր հաւաքական ուժը եւ վերահաստատելու մեր վճռականութիւնը: Տարիներու թաւալումը չեն կրնար մոռացութեան մատնել մեր նախահայրերուն դէմ գործուած ոճրագործութիւնը, մանաւանդ որ, մինչեւ օրս տարբեր երկիրներու մէջ ցեղասպանութեան կ'ենթարկուին այլ ժողովուրդներ եւս ազգային եւ կրօնական գետնի վրայ: Մեր պայքարը նաեւ ուղղուած է աշխարհի ուշադրութիւնը հրահրելու ներկայիս գործադրուող անարդարութիւններուն ու ոճիրներուն նկատմամբ:

Մենք կոչ կ'ընենք մեր համայնքի բոլոր հատուածներուն միանալու մեզի՝ ոգեկոչելու համար Հայոց ցեղասպանութեան 103-րդ տարելիցը եւ բարձրաձայնելու մեր հաւաքական խօսքն ու միջազգային ատեաններուն ներկայացնելու մեր պահանջները:

Ապրիլի 24-ը պատմական օր է ու պիտի շարունակէ մնալ այդպիսին, մինչեւ որ վերականգնին մեր սուրբ նահատակներու իրաւունքները ու յաղթանակէ արդարութիւնը:

Եկէք միասին ցոյց տանք մեր հաւաքական ուժը:

- Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմ
- Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ազգային Առաջնորդարան
- Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Եկեղեցի
- Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն
- Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն
- Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
- Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն
- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն
- Հայ Օգնութեան Միութիւն
- ՀՄԸՄ Արեւմտեան ԱՄՆ Շրջան
- Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն
- Համահայկական Ուսանողական Ընկերակցութիւն
- Ամերիկայի Հայկական Համագումարը
- Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ
- Հայ Ամերիկեան Խորհուրդ
- Հայ Իրաւաբաններու Միութիւն
- Պոլսահայ Միութիւն
- Լոս Անճելըսի Միացեալ Հայկական Խորհուրդ
- Հանրային Դպրոցներու Հայ Ուսանողներու Յանձնախումբ
- Հայ Իրաւաբան Ուսանողներու Ազգային Ընկերակցութիւն
- Open Wuonds

## «Թուրքիան Դեռ Հեռու է Եւրոպական Արժէքներէն», Ըսած է Յունաստանի Պաշտպանութեան Նախարարը



Յունաստանի եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարները Երեւանի մէջ կայացած մամուլային ասուլիսի ընթացքին

Թուրքիան դեռ հեռու է եւրոպական արժէքներէն: Յունաստանի պաշտպանութեան նախարար Պանայոտիս Գամետուրը յայտարարած է իր հայ գործընկեր Վիգէն Սարգսեանի հետ Երեւանի մէջ կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

Նախարարը ընդգծած է, որ

Յունաստանը կը ցանկանայ, որ Թուրքիան աւելի մօտ ըլլայ եւրոպական արժէքներուն:

«Բայց կը վախնամ՝ դատելով էրտողանի յայտարարութիւնները եւ Թուրքիոյ իշխանութիւններու որոշումները, Անգարան ձգտում

Շար.ը էջ 4

## ՄԴՀԿ Պատմութիւնը Սպաներէնով Իրաւաբան Տանթէ Ասիլեանի Գիրքի Ներկայացումը Պուէնոս Այրեսի Մէջ



Հեղինակ Տանթէ Ասիլեանին կը յանձնուի յուշանուէր՝ գիրքի ներկայացման ընթացքին

Պուէնոս Այրէսի «Wilton» Հիւրանոցի գլխաւոր սրահին մէջ տեղի ունեցաւ «Մէկ ժողովուրդ՝ Մէկ Կուսակցութիւն» անունը կրող եւ ՄԴՀԿ 130-ամեակին նուիրուած, միջազգային իրաւունքի մասնագէտ եւ փաստաբան Ընկ. Տանթէ Ասիլեանի գիրքի ներկայացումը, Շարժում Մշակութային Միութեան կազմակերպութեամբ:

Բացման խօսքին մէջ օրուայ հանդիսավար՝ փրոֆ. Մարի Էպէթեան կարդաց ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Համբէկ Սարաֆեանի գնահատանքի նամակը ու ողջունեց ներկա-

յութիւնը ՌԱԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սէրխիո Նահապետեանի, ՀԲԸՄ տեղական մասնաճիւղի ատենապետ Ռուբէն Կետիկեան եւ տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

Գիրքի բովանդակութեան մասին զեկոյցներով հանդէս եկան մասնագէտներ՝ Մարիա Դերսիպաճեան եւ Փաղըրիսիո Արսենսիօ Վիլեա, կարեւորելով ՄԴՀԿ դերը հայոց ցեղասպանութեան կանխարգելման գործին մէջ:

Շար.ը էջ 5



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Մովսէս Յակոբեանը Պայթացրել է ՀՀ-ի Միջը

ԿԱՐԻՆԵ ՍԱՐԻԲԵԿԱԵԱՆ

Երկու տարի առաջ Ապրիլի 2-ին Հայաստանում եւ Արցախում պատերազմ էր:

2016-ի Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ատրպէյճանական շարժակողական գործողութիւններ էր ձեռնարկել: Ապրիլի 2-5-ը թէժ մարտեր ընթացան շփման գծի ողջ երկայնքով ատրպէյճանական զինուժը չարձակողական գործողութիւններ էր ձեռնարկել: Ապրիլի 2-5-ը թէժ մարտեր ընթացան շփման գծի ողջ երկայնքով. ատրպէյճանական զինուժը կիրառեց ծանր տեխնիկա, այդ թւում նաեւ ՀԿՌ-Հ հրանետներ եւ մարտական անօդաչու թռչող սարքեր:

Ապրիլեան քառօրեայ պատերազմը ջրի երես հանեց մեր բանակի թոյլ եւ ուժեղ կողմերը. պարզուեց, որ մեր զինուած ուժերում յանցաւոր բացիթողութեան պատճառով առաջնագծում մարտական հերթափոխութեան համար նուազագոյն պայմաններն անգամ ապահովուած չեն. չկան կրակելու փամփուշտները, տանկերը չունեն վառելիք, ուղղաթիւները եւ անօ-

դաչու թռչող սարքերի դէմ մեր տղաները կանգնած են 80-ականներէ զէնքով, որոշ դէպքերում նաեւ բահով ու քարով: Բայց նաեւ պարզուեց, որ հայկական բանակն ունի այն, ինչի մասին չգիտեր ոչ միայն հակառակորդը, այլ անգամ հայրենի իշխանական էլիտան:

Վերջին երկու-երեք տասնամեակի ընթացքում առաջին անգամ ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ Հայաստանում եւ Արցախում հաստատուեց իրական ժողովրդավարութիւն՝ բառի ստուգաբանական եւ կիրառական իմաստով: Իրադրութեան եւ իշխանութեան տէրը այդ չորս օրերին դարձաւ հասարակութիւնը՝ սկսած վերջին բանուորից, ուսուցչից, բժշկից ու հացթուխից, վերջացրած առաջնագծում կանգնած շաքայլին զինուոր, հրամանատար եւ քաղաքական իշխանութեան ներկայացուցիչով: Այդ չորս օրերի ընթացքում հայ հասարակութիւնը ինքնուրույն որոշեց Արցախի ճակատագիրը եւ սահմանների հարցը՝ տապալելով

աշխարհաքաղական կեդրոններում Արցախի համար վաղօրօք մշակուած ծրագիրը:

Ապրիլի ամսուայ մարտական գործողութիւնների հետեւանքով գոհուեց 110 եւ վիրաւորուեց 121 զինձառայող եւ կամաւորական: Որեւէ հայ զինուոր չի նահանջել դիրքերից, մինչեւ կեանքի վերջին ռոպէն բոլորը պայքարել են:

Ապրիլեան պետարագմի երկրորդ տարելիցի աւիթով ԵՊԲ-ը այցելած ՀՀ Զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Մովսէս Յակոբեանը յայտարարել է, որ ապրիլեան պատերազմը բանակի համար մեծ դաս ու մեծ փորձառութիւն էր:

«Յանկացած իրավիճակ, որը ստեղծուած է զինուած ուժերում, վերլուծուած է եւ համապատասխան դասեր է քաղուած, միջոցառումներ են ձեռնարկուած, որ բանակի մարտունակութիւնն էլ աւելի բարձրացուի: Երկու տարուայ ընթացքում բաւականին մեծ աշխատանք է կատարուել, եւ այն խնդիրները, որոնք կային ապրիլ-

եան պատերազմի ժամանակ, բոլորի վերաբերեալ համապատասխան միջոցներ են ձեռնարկուել: Հակառակորդն այդպիսի ռազմական գործողութիւն այլեւս ի վիճակի չէ իրականացնել, բայց դա չի նշանակում, որ դա բաւարար է», -ասել է Մովսէս Յակոբեանը եւ ի պատասխան հարցի, թէ ե՞րբ հետ կը վերցնենք Լեյլ թեփէ բարձունքը, նշել. «Երբ դրան հրաժեշտութիւնը լինի»:

Դիտարկմանը, թէ շատ է խօսուել եւ՛ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան, եւ՛ գեներալ Մանուէլ Գրիգորեանի կողմից, որ ապրիլեան պատերազմի ժամանակ կորցրած 800 հ.ա. տարածքները կարեւոր ռազմավարական նշանակութիւն չեն ունեցել, Մովսէս Յակոբեանը հակադարձել է. «Հայրենիքը ՀՀ-ինը չէ, հայրենիքը հայ ժողովրդինն է, եւ հայ ժողովուրդն է որոշելու»: Թերեւս ակամայ, կամ էլ գուցէ կանխամտածուած Մովսէս Յակոբեանը պայթացրել է միջը, թէ ՀՀ-ն է ամէն ինչ որոշում: Նա արել է բացառիկ օբիեկտիւ յայտարարութիւն, որի ճշմարտացիութիւնն ապացուցուեց ապրիլեան քառօրեայ ժամանակ: Մովսէս Յակոբեանը քաջատեղեակ է, թէ ով որոշեց եւ ինչպէս:

Իհարկէ դժուար է ասել, թէ երկու տարուայ ընթացքում կատարուած աշխատանքը բաւական է, որպէսզի անհրաժեշտութեան դեպքում մենք չունենանք այն խնդիրները, որ ունեցանք ապրիլին: Եթէ բոլոր պատասխանատուները բոլոր յայտարարութիւնները ճշմարտացի լինէին, մենք ապրիլին այլ պատկեր կ'ունենայինք: Սակայն անկախ խնդիրներից, որոնց համար պատասխանատուութեան իր կարեւոր բաժինն ունի նաեւ ինքը՝ Մովսէս Յակոբեանը, որոշում կայացնելու եւ մանաւանդ հայրենիքի ու ՀՀ-ի հարցում նա մինաշնակ ճիշտ է:

«ՀԱՅԵԼԻ»

## Ժողովրդագրական Խնդիրները Լուծելու Համար Անհրաժեշտ է Իշխանափոխութիւն, Մնացածը Ժամավաճառութիւն է

Վարչապետ Կարէն Կարապետեանը ժողովրդագրական խնդիրներին նուիրուած խորհրդակցութիւն է անցկացրել: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան՝ խորհրդակցութեան ընթացքում քննարկուել են ժողովրդագրական իրավիճակի բարելաման հնարաւորութիւնները, անդրադարձ է կատարուել ժողովրդագրական պատկերի վրայ ազդող հիմնական գործոններին, ներկայացվել են իրավիճակի բարելամանն ուղղուած միջոցառումները: Հասկանալի է՝ Կարէն Կարապետեանն այս խորհրդակցութիւնը հրաւիրել էր Սերժ Սարգսեանի յայտարարած 2040 թուականին 4 մլն բնակիչ ունենալու ծրագրի շրջանակներում: Միայն թէ, նկատենք, իրականում այս խորհրդակցութիւնները պարզ ժամավաճառութիւն են չիչեցնում: Սա մէկ պարզ պատճառով. Հայաստանի ժողովրդագրական խնդիրների պատճառները եւ լուծմանն ուղղված քաղաքական են, եւ ոչ այնքան կառավարութեան, որքան ողջ իշխանութեան եւ պետութեան դեկա-

վարման փրկափայտութեան ներքոյ են: Հայաստանում ժողովրդագրական պրոբլեմները սրուել են արտագաղթի մեծ ծաւալների, ինչպէս նաեւ ծնելիութեան ցուցանիշի շարունակական անկման հետեւանքով:

Մարդիկ արտագաղթում են առաջին հերթին այն պատճառով, որ շարունակուած է չլուծուած մնալ Ղարաբաղեան հակամարտութիւնը, եւ ամեն ռոպէ առկա է պատերազմի վերսկսման վտանգը: Ուստի շատերը խուսափում են իրենց արուզակներին կիսապատերազմական երկրում բանակ ուղարկելուց՝ գերադասելով արտագաղթել: Ու քանի դեռ չի լուծուել Ղարաբաղեան հիմնահարցը, չի հաստատուել խաղաղութիւն, արտագաղթի ծաւալների կտրուկ նուազում ակնկալելն առնուազն միամտութիւն է: Մարդիկ նաեւ արտագաղթում են համատարած յուսալքութեան պատճառով. Հայաստանում «ապագայ չեն տեսնում», այդպէս ասում է արտագաղթողների ճնշող մեծամասնութիւնը: Եւ գիտէ՞ք ինչու. այս տարիների ընթացքում մար-

դիկ դժգոհ են եղել իշխանութիւնների վարած քաղաքականութիւնից, պայքարել են իշխանափոխութեան համար, սակայն արդիւնքի չեն հասել. ՀՀ-ն ամեն անգամ ամենատարբեր մեթոդներով՝ ընտրակեղծիքներով, բռնութեամբ, սպանութիւններով, ընտրակաշառքով վերարտադրուել է: Ու ամեն մի կեղծուած ընտրութիւն իր հետեւից բերեց հիասթափուածների եւ արտագաղթողների հսկայ ալիք: Էլ չենք խօսում Հայաստանում տարիներ շարունակ տիրող սոցիալ-տնտեսական ծանր վիճակի մասին:

Արտագաղթի նման ծաւալները, բնականաբար, իրենց հետեւանքներն են ունեցել բոլոր ոլորտներում, այդ թւում ծնելիութեան ցուցանիշների վրայ: Այնպէս որ, Հայաստանում խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իշխանափոխութիւն, նաեւ ԼՂ հիմնահարցի լուծում: Հաւատացէ՛ք՝ դրանից յետոյ արդիւնքներն իրենց երկար սպասեցնել չեն տա, եւ ժողովրդագրական ոլորտն էլ կը բարելաւուի: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

## Լաւ Երկրի Բանաձեւը

ԱՐՄԻՆԵ ՕՅԱՆԵԱՆ

Տարրական սկզբունքներ ու գաղափարներ կան, որոնք կենսունակ են բոլոր ժամանակներում եւ բոլոր երկրներում: Այսպէս. գարգանում է այն հասարակութիւնը, որտեղ սոցիալական արդարութեան, հանրային համեմատելիութեան միջոցով է տիրում, որտեղ հասարակութիւնը շատ բեւեռացած եւ օտարուած չէ երկրի կառավարումից:

Այն երկրներում, որտեղ միջին խաւը գերակշռում է, հասարակութիւնն աւելի գիտակից է, իր իրաւունքների հարցում՝ պահանջատէր: Իսկ որտեղ հասարակութիւնը գրագէտ է, մարտունակ, պայքարող, այնտեղ իշխանութիւնը զգաստ է՝ հանրային կարծիքի նկատմամբ ուշադիր: Այն պե-

տութիւններում, որտեղ ընտրական իրաւունքը գործում է, եւ հնարաւոր է ընտրութիւնների միջոցով իշխանութիւն փոխել, պաշտօնեաներն աւելի գուսպ են ու համեստ, իսկ զինուած յեղաշրջումների հաւանականութիւնը փոքր է եւ անիմաստ: Այնտեղ, որտեղ նորմալ կրթական համակարգ կայ, գաղափարների բախում, հանրային դիսկուսիա, որտեղ այլընտրանքային ծրագրեր են իրականացուած, երիտասարդ սերնդին ճանապարհ են տալիս, այնտեղ սերնդափոխութիւնը հեշտ է իրականացուած, եւ տարբեր փակուղային իրավիճակներից ելքն էլ հեշտ է գտնուած:

Այն հասարակութիւնը, որտեղ հանդուրժողականութիւն կայ այլախոհութեան նկատմամբ, որտեղ մարդիկ ընդունում են իրենց սխալները կամ, գոնէ՝ սխալուելու հնարաւորութիւնը, որտեղ կուռքեր չեն ստեղծուած եւ դնում քաղաքական ուժերի ու համակարգերի գլխին, այնտեղ կադրային դեֆիցիտ, ճահճացում չի սպառնում: Այնտեղ նոր մտածողութեան, նոր ժամանակների շունչն առաւել զգալի է, եւ առաջընթացն էլ՝ նկատելի: Վերջապէս՝ երբ կայ ազատութիւն, մարդու իրաւունքները պաշտպանուած են, նոր սերունդն աճելու, առաջ գնալու հնարաւորութիւն ունի, եւ այլախոհներին էլ չեն քարկոծում, նման երկրներից արտագաղթելն էլ անիմաստ է դառնում:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
updated every Friday

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԿԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ԿԱԴԵԱՏԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էտմոն Մարուքեանի Յօդուածը Չի Նշանակեր, Թէ Ան Ներկայ Պիտի Չըլլայ Ազատութեան Հրապարակի Վրայ



«Իմ քայլը» երթի ընթացքին Նիկոլ Փաշինեան կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

«Իմ քայլը» երթով, Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան անդամներու եւ Նիկոլ Փաշինեանի հետ միասին Սպիտակէն կը յառաջանան վանաձոր: Ժանապարհին պատասխանելով լրագրողներու հարցերուն Փաշինեանը ընդգծած է թէ, իրենց արշաւը ուղղուած է մարդոց դուրս հանելու յուսահատութենէն եւ պայքարելու Սերժ Սարգսեանի վարչապետ ընտրուելու դէմ:

«Եթէ Ազատութեան հրապարակում քաղաքական պրոցեսներ ընթանան, «Ելք» դաշինքի մնացած անդամները այդ քաղաքական պայքարին կը միանան եւ կ'աջակցեն: Ես յոյս ունեմ, որ էտմոն Մարուքեանի այսօրուայ յօդուածը հրաժարում չէ այդ տեսակէտից եւ դիրքորոշումից», - ըսած է Փաշինեանը: Փաշինեանը նաեւ մանրամասնած է, որ Ապրիլի 13-ին կը շարժին Ազատութեան հրապարակ: Գուցէ մարդիկ Երեւանի մատուցներուն կը միանան իրենց:

Շարմագանով. Որեւէ Մէկը Իրաւունք Չունի Խոչընդոտել Մեր Սահմանադրական Իրաւունքը

Վարչապետութեան հետ կապուած Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը (ՀՀԿ) տակաւին հական պաշտօնական քննարկում չէ ծաւալած, ինչպէս յայտնած է ՀՀԿ Գործադիր մարմինի նիստէն ետք լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ՀՀԿ խօսնակ Ազգային ժողովի փոխ նախագահ էտուարտ Շարմագանովը: «Երբ գայ քննարկումը, մենք կ'իրականացնենք այդ քննարկումը եւ կը յայտարարենք մեր որոշման

Ըստ անոր՝ եթէ արդիւնքը պիտի ըլլայ 0, ապա այդ պէտք է ուրախացնէ էտուարտ Շարմագանովին, սակայն ինքը վերջինիս ուրախ չի տեսներ: Անդրադառնալով «Ելք» դաշինքի մէջ երեք կուսակցութիւններու անհամաձայնութեան Փաշինեանը ընդգծած է.

«Մեր հիմնական խնդիրն է համաձայնութիւն ունենալ քաղաքացիներին հետ, իսկ գործընկերների հետ համաձայնութիւն ձեռք բերել կը ստացուի»:

Փաշինեան նշած է նաեւ, որ եթէ մեծ չափով ժողովուրդ հաւաքուի Ազատութեան հրապարակի վրայ եւ կանխուի Սերժ Սարգսեանի առաջադրումը, ապա պէտք է տեղի ունենայ վարչապետի ընտրութիւններու երկրորդ փուլ, այդ ընթացքին բոլորը՝ ինչպէս նաեւ խորհրդարանական մեծամասնութիւնը, ընտրութեան առջեւ կը կանգնի՝ կամ ընտրել որեւէ վարչապետ, կամ տեղի կ'ունենայ օրէնքի ուժով արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ:

մասին», - ըսած է Շարմագանովը: «Որեւէ մէկն իրաւունք չունի, որպէս Ազգային ժողովի պատգամաւոր, խոչընդոտել մեր սահմանադրական իրաւունքը, բուհարկել եւ իրականացնել մեր ազատ պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը խորհրդարանում քուէարկելու համար: Մեր ժողովուրդը ձայն է տուել եւ մեր միակ պատուիրատուն Հայաստանի քաղաքացին է», ըսած է Շարմագանովը:

Պետական Կառոյցները Երեք Ամսուան Ընթացքին 35 Միլիոն Դրամէ Աւելի Յուշանուէրներ Գնած Են

Տնտեսութեան նախարարութեան երեկտրոնային գնումներու ARMEPS համակարգի մէջ տեղադրուած հարիւրաւոր պայմանագիրներէն կ'երեւի, որ պետական կառուցները վերջին երեք ամիսներու ընթացքին 35 միլիոն դրամէն աւելի յուշանուէրներ, ծաղիկներ եւ խմիչք գնած են: Կառավարութեան աշխատակազմը, օրինակ, ֆետրուարին 700,000 դրամով իւղանկար մը գնած է, որու վրայ «Ամառային տրամադրութիւն» կ'երեւի: Կառավարութենէն նոյնպէս չեն յստակացուցած, թէ նկարը որու պիտի նուիրուի: Արտաքին գործերու նախարարութիւնն ալ 200,000 դրամով «Մանկութիւն» իւղանկարը գնած է, բայց ի տարբերութիւն կառավարութեան աշ-

խատակագրի, փոխ արտաքին գործոց նախարար Շաւարշ Քոչարեանը մանրամասնած է, որ նկարը Հայաստանէն հեռացող ղեկավարի պիտի նուիրեն: Գնումներու ոլորտը ուսումնասիրող «Հանրային քաղաքականութեան հետազոտութիւններու ազգային կեդրոն» հասարակական կազմակերպութեան նախագահ Արտակ Մանուկեանի կարծիքով՝ այս բոլոր գնումները պերճանքի տարրեր են, քանի որ այս կառուցները հաշուետուութիւն չեն կատարեր, թէ ի վերջոյ ինչ օգուտ տուած են այս գնումները հարկատուներուն: Պետական կառուցները միլիոնաւոր դրամներ ծախսած են նաեւ խմիչքի համար:

Հայաստանում Փոփոխութիւնները Օրինական ճանապարհով Պէտք է Լինեն. Նարեկ Գալստեան



ՍՊՀԿ կեդրոնական վարչութեան անդամ Նարեկ Գալստեան անունի աւուլիսի ընթացքին

Մայիս 1-ի առթիւ ՍԴՀԿ-ն հանրահաւաք-երթ պիտի կազմակերպեն Շառլ Ազնաւուրի անուան հրապարակի վրայ, որու ընթացքին պիտի անդրադառնան երկրի մէջ առկա ընկերային կարեւորագոյն հիմնախնդիրներուն: Այդ մասին Ապրիլ 3-ին հրաւիրած մամուլի ասուլիսի ընթացքին յայտնած է ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան անդամ Նարեկ Գալստեանը:

«Հիմնականում խօսուելու է պանքային համակերման մասին, որը որպէս առաջարկ-պահանջներ կայացուելու է, խօսուելու է աշխատակողմերի իրաւունքների, շքեղութեան հարկի անհրաժեշտութեան մասին: Անդրադառնալու ենք բիզնեսի սոցիալական պատասխանատուութեան օրէնքով կիրաւումներ, օրինակ՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի թիւ մէկ հարկատուներից է համարուում, սակայն տեսնում ենք, որ գրկուած է Քաջարանը ասֆալտից, սա օրինակ է, որը ցոյց է տալիս, որ բիզնեսը չունի պատասխանատուութիւն այն միջավայրի նկատմամբ, որտեղից սնոււմ է», - ըսաւ ան:

Ինչ կը վերաբերի ներկայիս քննարկուող վարչապետի թեկնածութեան, ան նշեց, որ Հնչակեան կուսակցութիւնը, երբ կողմ քուէար-

կեց խորհրդարանական կառավարման համակարգի անցման, շատ լաւ կը հասկանար վտանգը եւ պարզ է, որ այսօր ՀՀԿ-ն պիտի ձեւաւորուի որպէս կառավարութիւն:

Նարեկ Գալստեանը կը կարծէ, որ չեն յաջողիր այն քաղաքական ուժերը, որոնք կ'ըսեն, թէ պիտի ձախողի վերարտադրութիւնը, քանի որ այսօր այնպիսի իրավիճակ չէ, որ կարելի ըլլայ փողոցէն արգիլել այդ վերարտադրութիւնը:

Ինչ կը վերաբերի Աժ «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանի «Իմ քայլը» նախաձեռնութեանը, Նարեկ Գալստեանը վստահութիւն չայտնեց, որ ան արդիւնք չի տար:

Ըստ անոր՝ այսօր չկայ այլ ընտրանքային գաղափարներու առաջարկ եւ իրենք կ'առաջարկեն գաղափարներ, իսկ բացի իրենցմէ ոչ մէկ այլ ընտրանք չի ներկայացներ: «Պրոցեսը յանուն պրոցեսի, կարծում եմ, օդ կրակուած փամփուշտ է», - ըսած է ան եւ երեսպաշտութիւն համարեց յաջողութեան մասին խօսիլը, քանի որ ակնյայտ է, որ պիտի չիրականացուի:

Ան ըսած է, որ իրենք վերջերս եօթ հարիւր հոգիով հանրահաւաք կազմակերպեցին եւ եթէ լաւ աշխատին, Մայիսի 1-ին բազմաթիւ մարդիկ կու գան:

Լրագրողական Կազմակերպութիւնները Կը Պայքարին ՉԼՄ Գործունէութիւնը Սահմանափակող Երկու Նոր Օրէնքներու Դեմ

Լրագրողական կազմակերպութիւնները կը պայքարին «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» եւ «Երեւան քաղաքի մէջ ինքնակառավարման մասին» ՀՀ օրէնքի մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրէնքներու դէմ:

Աւելի քան մէկ տասնեակ լրագրողական կազմակերպութիւններ յայտարարութիւն տարածած են, փաստելով, որ Ազգային ժողովի վերջին արտահերթ նիստին ընդունուած եւ Մարտի 30-ին ՀՀ գործող նախագահի ստորագրութեամբ վաւերացուած երկու վերոյիշեալ օրէնքներէն առաջինով կը նախատեսուի գործադիր բարձրագոյն մարմինի նիստերը իրականացնել ղեկավար, իսկ երկրորդով կը ստեղծուին մայրաքաղաքի աւագանիի նիստերը լուսա-

բանող ՉԼՄ-ներու ներկայացուցիչներու աշխատանքները կաշկանդող պայմաններ: Լրագրողական կազմակերպութիւնները յայտարարութեամբ փաստած են, որ այս օրէնքները եթէ ընդունուին իշխանութիւնը կ'անտեսէ լրագրողներու եւ քաղաքացիական հասարակութեան կառոյցներու՝ նախագիծերու վերաբերեալ քննադատութիւնը, այդ փաստաթուղթերը նիստի օրակարգ ընդգրկելու ժամանակ խորհրդարանը որեւէ հանրային քննարկում չէ իրականացուցած, աւելին՝ «Երեւան քաղաքի մէջ ինքնակառավարման մասին» ՀՀ օրէնքի մէջ փոփոխութիւններն ու լրացումները՝ «որոնք հիմնականին մէջ կը վերաբերին ՉԼՄ-ներուն եւ կը հակասեն ՏԻՄ-երու գործունէութեան թափանցիկութեան սկզբունքներուն, ընդունուեցան գործող ընթացակարգի բացառապէս խախտմամբ»:



# ԼՈՒՐԵՐ

## Ղարաբաղի մէջ Ականազերծման Աշխատանքներու Ժամանակ «HALO Trust»-ի Երեք Աշխատակիցներ են Ձոհուած



«HALO Trust» կազմակերպութեան անդամներէն մին՝ ականազերծման աշխատանքներու ընթացքին

ԼՂ Ղազանչի վայրին մէջ հակահրասայլային ականի պայթուածի հետեւանքով զոհուող աշխատակիցներու անուները հրապարակած է «HALO Trust» կազմակերպութիւնը: Զոհուողներու անուններն են՝ Պավել Ակոպով, Սամսոն Ավանէսեան եւ Մարատ Պետրոսեան:

Կազմակերպութիւնը յայտնած է, որ պայթիւնի հետեւանքով երկու վիրաւորներ ներկայիս Ստեփանակերտի հիւանդանոցը կը գտնուին, «HALO Trust»-ը կապ հաստատած է անոնց ընտանիքներուն հետ: «Մենք սերտօրէն կը համագործակցինք տեղի ոստիկանութեան եւ իշխանութիւններու հետ եւ կոչ ըրած ենք քննիչներուն, որ պէտք չունենան միջադէպի բոլոր փաստերու մասին», - ըստ էութեամբ է

կազմակերպութեան յայտարարութեան մէջ: Ըստ «HALO Trust»-ի, մահացողները եւ վիրաւորները ԼՂ բնակիչներ են:

Միջադէպի առնչութեամբ խօսած է «HALO Trust»-ի գործադիր տնօրէն Ճէյմս Քոուլանը. «Ամէն օր աշխարհով մէկ HALO-ի աւելի քան 8000 աշխատակից աշխատանքի համար կ'երթան այնպիսի վայրեր, ուր անոնցմէ բացի, ոչ ոք կրնայ քայլել, եւ այս ողբերգական միջադէպը իր ցոյց դրաւ, թէ անոնք ինչ վտանգներու կ'ենթարկուին, ինչպէս նաեւ կ'ընդգծուի այդ աշխատանքի կարեւորութիւնը: Մեր գործընկերները մահացած են Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար տարածքը աւելի ապահով դարձնելու աշխատանքի ժամանակ»:

## Պոլսոյ Հայաշատ Փողոցներուն Մէջ Աթեշեանի Դէմ Թռուցիկներ Փակցուած են

Թուրքիոյ իշխանութիւններու միջամտութեան հետեւանքով Պոլսոյ Հայոց պատրիարքական փոխանորդի պաշտօնին մնացող Արամ արքեպիսկոպոս Աթեշեանի դէմ ստամպուլահայ համայնքի ներկայացուցիչները կը շարունակեն բողոքի ձայն բարձրացնել:

«Ակոս»-ի փոխանցմամբ՝ քաղաքի հայաշատ Քուրթուլուշ եւ Ֆերիքէօյ թաղամասերու բանուկ փողոցներու մէջ փակցուցած են Աթեշեանի նկարով թռուցիկներ, որոնց վրայ ան պատկերուած է սեւ փակուած աչքերով:

Ոստիկանութիւնը արդէն ուսումնասիրութիւն սկսած է՝ պարզելու թռուցիկները փակցնողները: Իրաւապահ մարմիններու աշխատակիցները սկսած են ուսումնասիրել նաեւ յարակից փողոցներու



Արամ Աթեշեանի դէմ Թռուցիկներ՝ Պոլսոյ մէջ

տեսախցիկներու ձայնագրութիւնները: Բացի այդ, որոշ հատուածներու մէջ ոստիկանութիւնը արդէն հեռացուցած է այդ թռուցիկները:

Հայ փաստաբան Սեպուհ Ասլանկիլը դէպքի առնչութեամբ յայտնած է, որ փողոցներու մէջ թռուցիկներ փակցնելը յանցանք չի նկատուիր:

## Թուրքիան Դեռ Հեռու է

Շարունակուած էջ 1-էն

ունի անցեալը վերականգնել, մտադիր է Օսմանեան կայսրութիւն ստեղծել: Այս մէկը կը հեռացնէ Թուրքիան եւրոպական արժէքներէն», - նշած է նախարարը:

Յոյն նախարարը նշած է, որ Յունաստանը կը շարունակէ խաղաղութեան ուղղուած ջանքերը եւ Թուրքիոյ խորհուրդ տուած է լիջել անցեալին իրականացուած նման ծաւալապաշտական փորձերը, որոնք յաջողութեամբ չեն պսակուած:

Յունաստանի պաշտպանութեան նախարար Պանայոտիս Գա-

մենուր Երեւան կատարած պաշտօնական այցի ժամանակ այցելած է Սպառազինութիւններու եւ պաշտպանական տեխնոլոգիաներու «ArmHiTec-2018» միջազգային ցուցահանդէսը:

Մամուլի ասուլիսի ժամանակ նախարարը նշած է, որ տպաւորուած է ցուցահանդէսին եւ շնորհաւորած է կազմակերպիչները ցուցահանդէսի յաջող ընթացքին համար. «Այցի ընթացքին ես հնարաւորութիւն ունեցայ հանդիպել գործընկերոջս հետ: Հանդիպման ժամանակ քննարկուած են փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող

## Արմէն Սարգսեանի Երդմնակալութեան Օտար Պետութիւններու Ղեկավարներ Զեն Հրաւիրուած

Հայաստանի 4-րդ նախագահ Արմէն Սարգսեանի երդմնակալութեան արարողութեան օտարերկրեայ պետութիւններու ղեկավարներ եւ պաշտօնական պատուիրակութիւններ չեն հրաւիրուած: «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ տեղեկացուցած է նորընտիր նախագահի գրասենեակի պատասխանատու Յասմիկ Պետրոսեանը:

Վերջինիս փոխանցմամբ, օտարերկրեայ հիւրեր ներկայ պիտի ըլլան, բայց այժմ չեն կրնար հրապարակել, թէ որոնք են: Սակայն Մեծ Բրիտանիոյ թագաւորութեան արքայազն Չարլզը հրաւիրեալներու ցանկին մէջ չկայ: Մինչդեռ, մամուլը նախքան գրած էր, թէ Արմէն Սարգսեանը ցանկութիւն ունի, որ արտերկրէն հրաւիրուող պաշտօնաներու ցանկին գլխաւորը արքայազն Չարլզը ըլլայ:

Հայաստանի 4-րդ նախագահի երդմնակալութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ապրիլի 9-ին՝ Կարէն Տեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրի մէջ, Ազգային ժողովի յատուկ նիստով:

Ազգային ժողովի խորհուրդը նաեւ որոշած է նիստի իրականացման կարգի մասին: Ըստ այդմ, յատուկ նիստին հրաւիրուող անձանց ցանկը պիտի հաստատէ Ազգային ժողովի նախագահը:

Նիստը նախագահողի բացման խօսքէն վերջ դա՛հլիճ պիտի բեր-

ուին Հայաստանի Հանրապետութեան պետական դրօշը, նախագահական իշխանութեան խորհրդանշանը, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մայր օրինակը եւ Վեհաժողովը:

Չեւքը ղեկավարող Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մայր օրինակին եւ Վեհաժողովը Աւետարանին՝ Սահմանադրութեամբ սահմանուած երդմամբ հանդէս պիտի գայ հանրապետութեան նորընտիր նախագահը: Ապա ելոյթ պիտի ունենան Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նորընտիր նախագահը:

Նշենք, որ հրաւիրեալներու ցանկը առայժմ չէ հրապարակուած, սակայն ինչպէս նախքան տեղեկացուցած էր Արմէն Սարգսեանի գրասենեակի ղեկավարը, նորընտիր նախագահը ցանկութիւն յայտնած է, որ իր երդմնակալութեան արարողութեան ներկայ ըլլան Հայաստանի նախկին նախագահները՝ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Ռոպերթ Քոչարեանը: Արդէն իսկ յայտնի է, որ Քոչարեանը ներկայ պիտի չըլլայ Արմէն Սարգսեանի երդմնակալութեան, քանի որ, ինչպէս գրասենեակի ղեկավարը նշած էր, Քոչարեանը այդ օրերուն երկրէն դուրս պիտի ըլլայ:

Ինչ կը վերաբերի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ տակաւին չէ յատկացուած:

## Ռուսաստան Ամբողջութեամբ Կատարած է Հայաստանին Տրուած Ռազմական Վարկի Մատակարարումները

Ակնյայտ է, որ Հայաստանի ռազմա-քաղաքական ղեկավարութիւնը դժգոհ է Ատրպէյճանին ռուսական սպառազինութեան մատակարարումներէն, յայտարարած է պաշտպանութեան փոխնախարար Դաւիթ Փախչանեանը:

Ան աւելցուցած է, թէ Մոսկուան յայտարարած է, որ պիտի նուազեցնէ Ատրպէյճանին գէնքի մատակարարումներու քանակը:

«Ակնյայտ է, որ մենք որոշակի դժգոհութիւն ունենք, եւ ռուսական կողմէն այժմ հնչեցուած է, որ այդ մատակարարումները քանակները խիստ նուազելու են», - մանրամասնած է փոխնախարարը:

Նախորդ օրերուն ռուս բարձրաստիճան երկու խորհրդարանա-

կաններ՝ Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի՝ Դաշնութեան խորհուրդի Միջազգային գործերու կոմիտէի նախագահ Կոնստանտին Կոսաչովը եւ ստորին պալատի՝ Պետական տուժալի ԱՊՀ գործերով ու եւրասիական համարկման կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Չատուրիւր Երեւանի մէջ յայտարարած են, որ պարիլեան պատերազմէն ետք Մոսկուան հրաժարած է Պաքոսին մատակարարել նախկինի նման մեծ քանակով սպառազինութիւն, ինչպէս նաեւ՝ 2016թ. քառօրեայ պատերազմէն ետք Մոսկուան հետեւութիւններ ըրած է եւ տրամադրած է Հայաստանին ամենաժամանակակից պաշտպանական միջոցները:

բազմաթիւ հարցեր», - նշած է նախարարը:

Պանայոտիս Գամենուր ընդգծած է, որ Հայաստանին ու Յունաստանին կը միաւորեն ընդհանուր արժէքներն ու ընդհանուր պատմութիւնը. «Մենք ցեղասպանութիւններու զոհեր ենք», - յայտարարած է ան:

Անդրադառնալով պաշտպանութեան ոլորտի մէջ համագործակցութեան թեմային՝ ան նշած է, որ ռազմական համագործակցութիւնը, ինչպէս քաղաքական կապերը, ամենաբարձր մակար-

դակի վրայ են. «Հայաստանն ու Յունաստանը կանգնած են ընդհանուր մարտահրաւէրներու առջեւ: Սա կը պահանջէ համապատասխան մօտեցումներ: Ինծի համար պատիւ է Հայաստան գալը: Ես եղբայրական երկիրի մէջ եմ: Մեր ընդհանուր արժէքները ամուր կապ կը ստեղծեն: Մենք ընդհանուր ժառանգութիւն ունինք, որ կրնանք հպարտանալ: Պատմական կապերը աւելի ամրապնդուած են ընդհանուր հետապնդումներու արդիւնքով», - նշած է նախարարը:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



## Լիբանանի Խորհրդարանական Ընտրութիւնները. ԸՆԿ. Սեպուհ Գալփաքեան՝ «Հօր Պէյրուս Առաջին» Ցանկին Վրայ

Երկուշաբթի կէս գիշերին աւարտեցաւ Լիբանանի Խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցող ընտրացանկերու արձանագրութեան ժամկէտը: Արձանագրուեցան շուրջ 80 ցանկեր:

Ներքին գործոց նախարարութեան մէջ արձանագրուեցաւ «Հօր Պէյրուս Առաջին» ընտրացանկը, որ դաշինք է Հնչակեան կուսակցութեան, Ազգային Ազատ Հոսանքին, Մուսթաֆայալին եւ ՀՅԴ-ի միջեւ:

Ցանկը կազմուած է 8 թեկնածուներէ, ներառեալ՝ Հնչակեան կուսակցութեան թեկնածուն, Վարիչ Մարմինի ատենապետ, պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանը՝ հայ առաքելական աթոռին համար:

Ցանկին մաս կը կազմեն նաեւ Մասուտ Աշքար՝ մարոնի աթոռ, Նիքուա Մահարուի՝ կաթողիկէ աթոռ, Նիքուա Շամմաս՝ յոյս ուղղափառ, Անթուան Փանօ՝ փոքրամասնութիւններ, Յակոբ Թերզեան եւ Ալեքսանտր Մաթոսեան՝ հայ



առաքելական եւ Սերժ Չուխատարեան՝ հայ կաթողիկէ: Ընտրացանկը պայքար պիտի մղէ Պէյրութի առաջին ընտրատեղամասին մէջ, որ կը բաղկանայ Մուտուար, Ռը մէյլ, Աշրաֆիէ եւ Սայֆի շրջաններէն:

Լիբանանի Խորհրդարանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան Մայիս 6, 2018-ին:

## Արաբական Աշխարհ Արիւնալի Բախումներ Պաղեստինի Մէջ

Անցեալ շաբաթավերջը նշուեցաւ արիւնալի բախումներով, որոնք տեղի ունեցան Պաղեստինի կազա քաղաքին մէջ, պատճառ դառնալով 16 անձերու մահուան: Արդարեւ, 30,000 Համասի անդամներ բողոքի ցույց մը կատարած էին եւ բախումներու հետեւանքով սպաննուած էին 16 երիտասարդ ցուցարարներ, որոնց տարիքը կը տարուբերուի 19-36ի միջեւ: Այս արարքը բուռն կերպով դատապարտուեցաւ միջազգային շրջանակներու կողմէ:

Ներկայիս պաղեստինցիները կազայի մէջ սկսած են վրաններ լարել, նշելու համար Մայիս 15ը, որպէս «Աղէտի Օր», քանի որ այդ օրն էր 1948ին, Իսրայէլի պետութեան հաստատման եւ աւելի քան կէս միլիոն պաղեստինահայա-տակներու բռնի տեղահանութեան:

ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը այս առթիւ արտակարգ նիստ մը գումարելով, որոշեց հետաքննութիւն մը կատարել պաղեստինեան զոհերու կապակցութեամբ:

Նշենք նաեւ որ զատկական տօներուն առթիւ Իսրայէլեան իշխանութիւնները արգելք հանդիսացան շրջանի քրիստոնեաներուն կրօնական խուռներամ տօնակատարութեանց մասնակցելու:

## Սուրիացի Քիւրտերու Հանդիպումը Ֆրանսայի Նախագահ Մաքրոնիի Հետ Չայրացուցած է Անգարան

Միջազգային լրատուամիջոցներէն կ'իմանանք թէ շաբաթավերջին Ֆրանսայի նախագահ էմմանուէլ Մաքրոնիին Փարիզի մէջ ընդունած է քիւրտերու պատուիրակ-կուսիւն մը: Անոնք կը ներկայացնէին «Սուրիոյ Ժողովրդավարական Ոյժեր» Միութիւնը:

Ելիզէի պալատին մէջ Մաքրոնիին աջակցութիւն յայտնած է քրտական շարժման: Ան իր զօրակիցներուն վստահեցուցած է որ Ֆրանսան կ'աջակցի յատկապէս Սուրիոյ Հիւսիս-Արեւելեան շրջանի մէջ անվտանգութիւն հաստատելու համար: Նմանապէս Մաքրոնի կողմ արտայայտուած է Ֆրանսայի եւ Միջազգային հանրութեան աջակցութեամբ Թուրքիոյ եւ «Սուրիոյ Ժողովրդավարական Ոյժեր»-ու միջեւ երկխօսութիւն սահմանելուն:

Իր հերթին Անգարան յայտնած է որ չընդունին Մաքրոնիի առաջարկը քիւրտերու հետ երկխօսութեան կապակցութեամբ: Այս առթիւ Թուրքիոյ փոխ վարչապետ Պէքիր Պոզտուղը յայտարարած է որ աջակցելով քիւրտերուն կը նշանակէ որ Փարիզը կ'աջակցի Սուրիոյ մէջ գործող ահաբեկիչներուն:

Իսկ նախագահ էրտողան շատ ծանր պատասխանած է ըսելով «Մաքրոն, դուն ո՞վ ես, քեզի ո՞վ տուեր է միջնորդութեան այսպիսի պարտականութիւն մը: Ասիկա քու չափդ չէ: Թուրքիա այդպիսի միջնորդի մը պէտք չունի: Թուրքիա ե՞րբ է որ ահաբեկիչներու հետ սեղան նստեր է: Ահաբեկիչներու դէմ մենք կ'ընենք այն ինչ որ ըրինք Աֆրիկի մէջ»: Էրտողան միաժամանակ ամբաստանեց Իսրայէլը, որպէս ահաբեկչական երկիր մը:

## Լարուած Իրավիճակ Իրանի Եւ Սեւտական Արաբիոյ Միջեւ

Սեւտական Արաբիոյ գահա-ժառանգ իշխան Մուհամմէտ Պէն Սալման, կոչ ուղղած է միջազգային հանրային կարծիքին, իրանի նկատմամբ տնտեսական եւ քաղաքական յաւելեալ ճնշում բանեցնելու, որպէսզի հնարաւոր ըլլայ խուսափիլ տարածաշրջանին մէջ անմիջական ռազմական բախումէն:

32 տարեկան գահաժառանգը յայտնած է նաեւ որ իրանական վարչաձեւին նկատմամբ յաւելեալ ճնշում գործադրելու պարագային միայն հնարաւոր կ'ըլլայ խուսափիլ զինուած հակամարտութենէն:

## ՄԴՀԿ Պատմութիւնը Սպաներէնով



Շարունակուած էջ 1-էն

Ելուցի ունեցողները ընդգծեցին ՄԴՀԿ աննկուն կամքը պայքարելու նախ ուժեղ Սուրբանի եւ ապա Երիտասարդ թուրքերու իշխանութեան դէմ:

Խօսք առաւ ՄԴՀԿ Արժանթի-նի վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Տոքթ. Գարլոս Դարփինեան,

բարձր գնահատելով գիրքի հեղինակ ընկ. Տանթէ Ասիլեանի մտաւորական արժանիքները եւ մայր հայրենիքէն հեռու, տասնամեակներու նուիրումը մեր գաղափարական ինքնութեան պահպանման գործին:

Հանդիսութեան աւարտին երգուեցաւ ՄԴՀԿ քայլերգ՝ Հեռաւոր Երկիրը:

## Եւրոպական Դատարանը Ատրպէյճանի Դէմ Գործընթաց Սկսած է Սպանուած Երեք Հայ Չինուորներու Հարագատներու Դիմումով

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) յայտնաբերած է «Գրիգոր Նարայեանն ու միւսները ընդդէմ Ատրպէյճանի» գործը եւ հարցեր ուղղած Ատրպէյճանի կառավարութեան:

Դիմումատուները 2016-ի տարեկերջին Տաւուշի մարզի Չինարի գիւղի մօտակայքը տեղակայուած «Թիֆլիս» մարտական յենակէտի վրայ սպանուած զինծառայողներ Խոկար Նարայեանի, Էրիկ Աբովեան եւ Շաւարշ Մելիքեանի հարագատներն են: Եւրոպատարանի մէջ գիրքնք կը ներկայացնեն Արտակ Զեյնալեանը եւ Արա Ղազարեանը:

Հանրագումարի բերելով դիմումատուներու ներկայացուցած փաստերը՝ Եւրոպատարանը արձանագրած է.

Դեկտեմբերի 26, 2016 թուականի առաջինին Ատրպէյճանի զինուած ուժերու զինծառայող Չինգիզ Ղուբանովը հատած է հայ-ատրպէյճանական սահմանը եւ առաջացած դէպի «Թիֆլիս»: Ժամը 8:30-ի սահմաններուն Նարայեանն ու Աբովեանը լքած են մարտական յենակէտը եւ զացած ջուր հաւաքելու: Երկուքն ալ անգէն եղած են: Կրակոցներ լսուած են, եւ աւելի ուշ պարզուած է, որ Նարայեանն ու Աբովեանը սպանուած են: Մարտական յենակէտի վրայ գտնուող միւս զինուորները

անմիջապէս վազած են կրակոցներու ուղղութեամբ, հետեւած է փոխհրահմարտիւն, որու ընթացքին զոհուած է հայ երրորդ զինծառայողը՝ Մելիքեանը: Փոխհրահմարտիւնէն մէկ ժամ անց կրակոցները հակառակ կողմէն դադրած են, եւ յայտնաբերուած են սպանուած երեք հայ զինծառայողներու եւ Ղուբանովի դիակները:

Դիմումատուները հայցի մէջ նշած են՝ Ատրպէյճանը ընդունած է, որ Ղուբանովը սպանած է հայ զինծառայողները, սակայն որեւէ հետաքննութիւն չէ իրականացած, հակառակը, պետութիւնը փառաբանած է անոր գործողութիւնը եւ յետմահու անոր Ատրպէյճանի ազգային հերոսի կոչում շնորհած է, անոր անունով փողոց անուանակոչուած է: Դիմումատուները ընդգծած են, որ տեղի ունեցած է Մարդու իրաւունքներու եւրոպական միութեան 2-րդ յօդուածի խախտում. երեք զինուորները սպանուած են ապօրինաբար, անոնցմէ ոչ մէկը զինուած չէր, եւ այդ պահին անոնք որեւէ վտանգ չէին ներկայացնէր: Հետեւաբար, անոնց մահը ուժի արդիւնք չէ, որու կիրառումը «բացարձակ անհրաժեշտ» էր:

Դիմումատուները նաեւ նշած են, որ երեք հայ զինծառայողներու սպանութիւնը տեղի ունեցած է ատելութեան հողի վրայ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680



### Աթենքում Տեղի Ունեցավ Պեռլինի Վեհաժողովի 140-ամեակին Նուիրուած Գիտաժողով



Մարտի 26-ին, Աթենքում, Կիպրոսի դեսպանատանը դեսպանութեան մշակութային բաժնի եւ Հայ-յունական ուսումնասիրութիւնների կենտրոնի համատեղ նախաձեռնութեամբ ու «Հայաստան» հ/կ կեդրոնի համագործակցութեամբ, կազմակերպուեց Պեռլինի վեհաժողովի 140-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողով:

Գիտաժողովը կրում էր «Պեռլինի վեհաժողովից 140 տարի անց. Մակեդոնական եւ Կիպրական խնդիրների ծագումը եւ Հայկական հարցը» անուանումը:

Բանախօսներն էին Աթէնքի համալսարանի դասախօս Սպիրիդոս Պոլուժիդիասը, Աթէնքի համալսարանի դասախօս Անդրէաս Անտոնոպոլուսը, գրող, հետազոտող, Հայ-յունական ուսումնասիրութիւնների կեդրոնի քարտու-

ղար Յովսէփ Քասեսեանը, Մոսկուայից հրաւիրուած «Ժամ» ամսագրի գլխավոր խմբագիր, Մշակութաբանութեան դոկտոր, Մոսկուայի պետական մանկավարժական համալսարանի դասախօս Աննա Գիվարգիզեանը, Յունաստանի իրավաբանների ընկերակցութեան վարչական խորհրդի անդամ Աթանասիա Ֆոտիադին:

Գիտաժողովի համակարգողն էր գրող, Պատմական գիտութիւնների դոկտոր Լուկաս Աքելոսը:

Ամփոփելով Պեռլինի վեհաժողովում հայութեանը վերաբերուող հարցերը, Յովսէփ Քասեսեանը մասնաւորապէս նշեց Հայկական հարցի միջազգայնացման եւ Օսմանեան պետական մեխանիզմի կողմից հալածուող հայութեան իրաւունքների ճանաչման կարեւորութիւնը:

Աննա Գիլարգիզեանը խոսելով Պեռլինի վեհաժողովի պատմա-

### Հայաստան Արցախ Ֆոնտը Յունուարէն Մարտ \$6.8 Միլիոնի Նպաստ Հայթայթած է Հայաստանի ու Արցախին

2018-ի առաջին եռամսեակի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը աւելի քան \$6.8 միլիոն արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին:

Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը \$6.7 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք եւ այլ մարդասիրական պիտոյքներ ապահոված է AmeriCares կազմակերպութեան ( \$4 միլիոն), ներառեալ TOMS Shoes կոշիկի ընկերութեան կողմէ նուիրուած կտակաւ (canvas) կոշիկներ, ինչպէս նաեւ MAP International-էն ( \$1.7 միլիոն), Direct Relief International-էն ( \$747,000), եւ Fawn Grove Compassion Center-էն ( \$119,000):

Մեծարժէք պարանքներ նուիրած են նաեւ Agape Project-ը ( \$83,000) եւ Պրն. Սերգէյ Սարգիսովը ( \$15,500):

Այս ժամանակաշրջանին նուիրուած դեղորայքն ու բժշկական պիտոյքները առաքուած են Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան, Արցախի Առողջապահութեան Նախարարութեան, ՀԲԸՄ Քլոտիա Նազարեան Բժշկական կեդրոնին, Արաբկիրի Մանուկներու Միացեալ Հիմնարկին, Մուրացան Երեխաներու Ներգա-

տաբանութեան (Endocrinology) կեդրոնին, Ուռուցքաբանութեան Ազգային կեդրոնին, եւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական կեդրոնին:

Անցեալ 29 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$783 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն, 158 թուիչքներով եւ 2,392 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կեւառաջարկուի միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեանը եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Մեծապէս կը բաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը տրամադրել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

կան դասերի, Խրիմեան Հայրիկի «Երկաթէ շերեփ»-ի, Հայ ազգային ազատագրական պայքարի առաջին փուլի ձեւաւորման մասին, իր գեկոյցն աւարտեց Հայրիկի պատգամով՝ «Ահա թողում ձեզ մշտախօս կտակ, որ հայը իր հայրենատուր հողէն չբաժնուի, զի հողն

պէտք է կենաց եւ մահու օր. պինդ գրկէ՞ք հողը»:

Գիտաժողովին քննարկուեցին նաեւ Մակեդոնական եւ Կիպրական խնդիրների ծագման հարցերի եւ յետագայ զարգացումների մասին:

«Հայաստան» լրատուական կեդրոն, Աթէնք



ARMENIAN COUNCIL OF AMERICA  
Presents a special screening of

# Intent to Destroy

Death, *Denial* & Depiction

## Sunday April 08 2018

at 3:00 pm

*INTENT TO DESTROY, Pulling back the curtain on Genocide censorship in Hollywood due to U.S. government pressure to appease a so-called strategic ally. Intent To Destroy embeds with a historic feature production as a springboard to explore the violent history of the Armenian Genocide and legacy of Turkish suppression and denial over the past century.*

United Artist La Canada 8  
1919 Verdugo Blvd. La Canada Flintridge, CA  
Limited Seating  
To Reserve Tickets Call:  
**818.660.5142**  
www.ArmenianCouncil.org  
@ArmenianCouncil  
facebook.com/ArmenianCouncil



# Մեծ Եղեռնի

100+3-րդ Ամյակի Առթիվ

In commemoration of the

100+3 Anniversary of the Armenian Genocide

## Հսկում

### COMMEMORATING THE VICTIMS OF THE ARMENIAN GENOCIDE

*Organized by*

*GAIJZ Youth Organization & ACA San Gabriel Chapter*



# Կիրակի Ապրիլ

# Sunday April

# 22, 2018

**MEMORIAL PARK**

**PASADENA**

**85 East Holly Street, Pasadena, CA 91101**

**Starting at 5:00 pm**



# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԼԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԻՏՆԻ ՄԷՋ



Ամերիկայի Հայ Ալետարան-  
չական Ընկերակցութիւնը, հիմն-  
ուած 1918 թուին, Worcester, MA,  
որպէս պատասխան հայ ժողովուր-  
դի կրած ահաւոր տառապանքնե-  
րուն, արդարացուած է. «Մենք  
հիմնեցինք Հայ Ալետարանչական  
Ընկերակցութիւնը հաւատարմով թէ  
մեր մարտիրոսացեալ հայ ազգը  
պիտի ապրէր իբրեւ ազգ... Ուրեմն  
հարկ եւ անհրաժեշտ էր ամէն գնով  
սատարել մեր ազգային եւ հոգեւոր  
վերականգման գործին:» (Վեր.  
Միհրան Թ. Գալաթեան, առաջին  
գործադիր տնօրէն Ամերիկայի Հայ  
Ալետարանչական Ընկերակցու-  
թեան, 1918):

Տօնախմբելու հարիւրամեայ  
ծառայութիւնը աշխարհասփիւռ  
հայ գաղութներու մէջ եւ իրակա-  
նացնելու հարիւրամեակի 20 միլի-  
ոն տոլարի հանգանակութեան ար-  
շաւը, Հայ Ալետարանչական Ընկե-  
րակցութիւնը, իր գործակիցնե-  
րուն հետ մէկտեղ, կը կազմակերպէ  
համաշխարհային տօնախմբութիւն-  
ներ 2017-2018 տարեշրջանի ըն-  
թացքին, որու առաջինը կայացաւ  
Ամերիկայի Միացեալ Նահանգնե-  
րու New Jersey Նահանգին մէջ, 21  
Հոկտեմբեր 2017-ին:

Երկրորդ տօնախմբութիւնը  
տեղի ունեցաւ Սիտնի, Աւստրալիա  
15-18 Մարտ 2018-ին, Աւստրալիոյ  
Հայ Ալետարանչական Ընկերակ-  
ցութեան նախաձեռնութեամբ,  
որուն Նախագահ եւ Գործադիր  
Տնօրէնն է Վեր. Դոկտ. Գրիգոր  
Եումշաճըզեան: 100 ամեակի հան-  
գանակութեան իր բերած բաժի-  
նով, Աւստրալիոյ Ալետարանչա-  
կանը որոշեց ստանձնել վերանորո-  
գումը Արցախի չորս մանկապար-  
տէզներուն, որոնք են Ստեփանա-  
կերտի Յակոբ եւ Լիտիա Պաղտիկ-  
եան Մանկապարտէզը, Շուշիի Յա-  
կոբ Կարապետ Պրլէզիքեան Ման-  
կապարտէզը, Մարտակերտի  
Վեր.Դոկտ. Մովսէս Ճանպազեան  
Մանկապարտէզը եւ Ասկերանի  
Մանկապարտէզը: Միջոցառումնե-  
րը կայացան Արցախի Հանրապե-  
տութեան յարգոյ Պետնախարար  
Պր. Արայիկ Յարութիւնեանի հո-  
վանաւորութեամբ: Ան ժամանած  
էր Սիտնի, Աւստրալիոյ Ալետա-  
րանչականի հրաւերով՝ որպէս ներ-  
կայացուցիչ Արցախի Հանրապե-  
տութեան եւ Հանրապետութեան  
Նախագահ՝ Տիրա Բակո Սահակեա-  
նի: Հանդիսութիւններուն ներկայ  
գտնուեցան արտասահմանէն ժա-  
մանած հիւրեր՝ Հայաստան, Ֆրանս-  
սա, Լիբանան, Սուրիա եւ ԱՄՆ:  
Հիւրաբար ներկայ էին նաեւ Ամե-  
րիկայի Հայ Ալետարանչական Ըն-  
կերակցութեան Նախագահ Տօթթ.  
Նազարէթ Տարագճեան եւ Գործա-

դիր Տնօրէն Զաւէն Խանճեան:

Սիտնիի մէջ Հարիւր ամեակի  
տօնակատարութիւնները սկսան  
Հինգշաբթի 15 Մարտին, բեմադ-  
րիչ ձիւան Ալետիսյանի «Վերջին  
Բնակիչը» շարժապատկերի ցու-  
ցադրութեամբ, որ կը ներկայացնէ  
Ատրպէյճանի մէջ հայկական զիւ-  
ղի՝ Կիւրճեանի բնակչութեան տե-  
ղահանումը 1988 թուականին: Շար-  
ժապատկերի ցուցադրութիւնը տե-  
ղի ունեցաւ Hoyts Պատկերասրա-  
հին մէջ: Յաջորդ օր, 16 Մարտին  
կայացաւ Մշակութային, Գեղար-  
ուեստական Երեկոյ մը Concourse  
Թատերասրահին մէջ, ուր հանդէս  
եկան Հայ եւ այլ ազգի արուեստա-  
գէտներ: Շարք մը պատկառելի  
հիւրեր ներկայ գտնուեցան երկու  
միջոցառումներուն, ինչպէս՝ տե-  
ղական խորհրդարանի եւ պետա-  
կան պաշտօնեաներ, Աւստրալիոյ  
Միացեալ Եկեղեցիի ներկայացու-  
ցիչներ, ինչպէս նաեւ Գերաշնորհ  
Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նա-  
ճարեան՝ Առաջնորդ Աւստրալիոյ  
եւ Նոր Զիլանտայի Հայ Առաքելա-  
կան Եկեղեցիներու: Արցախի Հան-  
րապետութեան Նախարար՝ Պրն.  
Արայիկ Յարութիւնյանը յայտնեց  
իր ջերմագին երախտագիտութիւնը,  
թէ՛ հրաւերին եւ թէ՛ Ալետարանչա-  
կանի տարած աշխատանքին հան-  
դէպ, որուն նպատակն է զօրակցիլ  
հերոս Արցախին: Մշակութային երե-  
կոն աւարտեցաւ Առաջնորդ Եպիս-  
կոպոս Նաճարեանի խօսքերով եւ  
օրհնութեան աղօթքով:

Հայ Ալետարանչական Ընկե-  
րակցութեան 100 ամեակի Փառա-  
բանութեան Պաշտամունքը տեղի  
ունեցաւ Կիրակի 18 Մարտին,  
Սիտնիի Հայ Ալետարանչական Մի-  
ացեալ Եկեղեցիին մէջ, առաջնոր-  
դութեամբ Եկեղեցիի Հովիւ՝ Վեր.  
Յակոբ Սարգիսեանի: Խուռն էր  
ներկայութիւնը եկեղեցասրահին ու  
անոր կից գտնուող սրահին մէջ ուր  
պատաստի վրայ կը ցուցադրուէր  
պաշտամունքը: Պաշտամունքին ներ-  
կայ էին Արցախի Պետնախարար  
Պրն. Հարությունյան, Աւստրալիոյ  
մէջ Արցախի մշտական ներկայա-  
եան, եւ Ալան Յուհաննէս: Մինչ այդ՝ անոնք տեղեակ էին որ Շահան Միացեալ Նահանգներ հաստատուելէն առաջ երգահանահարն էր նոյն ինքն Կոմիտասին 1910-ին հիմնած երգչախումբին: Հետեւաբար՝ այդ յայտագրին մանրամասնութիւններու երաժշտական բաժինը կը վստահուի երիտասարդ Շահանին: Չայնագրուած բոլոր սկաւառակները կը յանձնուին՝ ապահովութեան համար երաժշտական մթերանոցի մը: Ընկերութեան Հրեայ տնօրէնը- Մայքըլ Նայտան (Michael Naida) երբ կ'իմանայ թէ Շահան ճուղարտէն շրջանաւարտ է, կ'առաջարկէ իր նուագաձններէն ձայնագրել: Շահան օգտագործելով այս առիթը կը ներկայացնէ Արամ խաչատուրեանի մանուկներու համար գրուած երկու ալպոմ, որ մինչ այդ բնաւ չէին ձայնագրուած: «Ուրկէ՞ ո՛ւր: Ահա քեզի բախտ, որ ապագայի շատ մը դուռներ բացաւ իմ առջեւ»- կը խոստովանի Շահան Արծրունի:

Երրորդ անձը, որ մեծ դեր ունեցած է Շահանին կեանքին մէջ 1972-73 թուականներէն սկսեալ, Վիքթոր Պօրկան է, «որուն տոհմիկ ծագումն ալ հրէական է» կ'ընդձեռն Արծրունի:

Շահան Արծրունիին «ԲԱՆՏ»-ին ճամբայ բացող այդ երեք անձնաւորութիւններուն չափ ալ պէտք է շեշտել նաեւ թէ՛ բոլոր անոնք, որ ծանօթացած են Շահանին, կրցած են տեսնել իր մէջ տաղանդը, սէրը եւ կրակը երաժշտութեան հանդէպ, եւ ինչ խօսք՝ Շահան Արծրունի առաւելագոյնս կրցած է արդարացնել անոնց վստահութիւնը:

Ի՞նչ են Շահան Արծրունիին Յառաջիկայի Ծրագիրները

Շահան Արծրունի տարիներու երազը իրականացնող երկար ճամբորդութեան մը սկիզբին է: Երազն է ծիածանի գոյներով իրար ետեւէ լոյս ընծայել ութը խոսասալիկներու շարք մը, Չուխաճեանէն սկսելով մինչեւ այս օրերը- որ պիտի ընդգրկէ հետեւեալները-

1. Կոմիտասի դաշնամուրային գործերը
2. Կոմիտասի ժամանակակիցները
3. Ալան Յովհաննէսի անտիպ գործերը
4. Սփիւռեալայ յորինողներու գործերը
5. Խաչատուրեանի ամբողջական գործերը
6. Հայրենի յորինողները
7. Հայ կին յորինողները
8. Հայ երգահաններու մանուկներու համար գրած գործերը Առաջին եօթը խոսասալիկները պիտի ներկայանան ծիրանի գօտիի եօթը գոյներով, ամբողջացնելէ ետք, այդ գոյները իրար խառնելով կը ստանաս ութերորդը՝ ճերմակ գոյնը՝ որ խորհրդանշն է մեր ապագայ մանուկներու սպիտակ, պայծառ եւ յուսատու ապագային:

Ըստ Արծրունիին, ներկայ օրերու ելոյթները կրնան հմայել միմիայն այդ օրուան սրահին մէջ գտնուող հանդիսատեսը: Նկատի առնելով ձայներիզներու եւ խոսասալիկներու շարափոփոխ եւ անորոշ ապագան՝ անհրաժեշտ էր, որ բան մը մտածուէր զանոնք երաժշտասէր մեծամասնութեան հասցնելու... երկրէ երկիր-մատչելի դարձնելու եւ ազատելու խոստանալիկներու մոռացութեան մատուցող ճակատագրէն: Պրն. Արծրունիին մտահոգութիւնը փարատող եւ երաժշտական ստեղծագործութիւնները

անմահութեան տանող այդ բոլոր ձայնագրութիւնները բժախնդրօրէն ձայնագրուելէն ետք կը դրկուին-իր անհատական ջանքերով- աշխարհի զանազան երաժշտական գրադարաններու եւ ձայնասփիւռներու կայաններուն անոնց արխիւին մէջ մնայուն կայք հաստատելու:

Վերջերս Նիւ Եորքի դասական երաժշտութեան ձայնասփիւռի կայան WQXR-էն սփռուած Կոմիտասի մէկ կտորը պատճառ դարձած էր քանիներու հետաքրքրութիւնը արթնցնելու:

Ի՞նչ են Շահան Արծրունիին Անմիջական Ծրագիրները

Շահան այս օրերուն կլանուած է բարձր մակարդակի յայտագրի մը պատրաստութեամբ: Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարի 50-ամեակի տօնակատարութեանց շարքին Առաջնորդ Սրբազան Գերշ. Խաժակ Արք. Պարսամեանի խնդրանքով Պրն. Արծրունի ծրագրած է Հայ հոգեւոր երաժշտութեան նուիրուած համերգ մը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ՝ Մայիս 5, 2018-ին, բարձր նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառին:

Արդէն իսկ յայտագիրը կազմուած է Շահանեան բժախնդրութեամբ իրար քով բերելով այնպիսի անուններ՝ որոնք երաժշտական աշխարհի լաւագոյն անուններէն են- երգչուհի՝ Էլիզապէթ Պայրազտարեան, սրնգահար՝ Սաթօ Մուդալեան, գլարինէթի կատարումով՝ Նարեկ Յարութիւնեան, երգահանահար՝ Հայկ Մարտիրոսեան- ելոյթ ունենալու Կոմիտասի, Ալան Յովհաննէսի, Տիգրան Մանսուրեանի գործերէն, հետաքրքրական գործիքներու մասնակցութեամբ: Յայտագրին մաս պիտի կազմէ նաեւ 16 հոգիոնց արական սենեկային երգչախումբ մը՝ հայրենի դեկավար՝ Յովհաննէս Միրզոյեանի ձգտին ներքեւ, հրամայելու Կոմիտասի պատարագէն բաժիններ: Ելոյթ պիտի ունենայ նաեւ միջդպրոցական աշակերտական խումբը՝ բացման աղօթքներով:

Ի՞նչ են Շահան Արծրունիին Յեռակայ Գործադրելի Ծրագիրները-

Մէկ խօսքով Շահան Արծրունիին իսկական հոգեկան պապակը գոհացնող աշխատանքը . . . իր գիտութիւնը նոր սերունդին փոխանցել է, իր մէջ ամբարուած մասնագիտական պաշարն ու գիտելիքները փոխանցել նոր սերունդին: Այս մտահոգութիւնը զինք տարած է Հայաստան՝ ուր հակառակ անոր, որ 150 անգամէն աւելի հայրենիք այցելած է, այս ճամբորդութիւնը ուրիշ հեռանկար ունէր: Անցնող գարնան (2017 Մայիսին) Հայաստանի Մշակութային Նախարարութեան աջակցութեամբ եւ հրաւերով Հայաստանի շրջաններէն, սահմանամերձ գիւղերուն մէջ փնտրել, գտնել, քաջալերել 8-էն 21 տարեկան պատանիներ՝ որոնք երաժշտական հակում ունին եւ զանոնք պատրաստել որակաւոր ելոյթներու, ոչ միայն Հայաստանի մէջ ելոյթ ունենալու, այլ թերեւս՝ արտերկրի զանազան երկիրներու եւ համայնքներու մէջ:

Պարոն Արծրունի երախտագիտութեամբ կը չիշէ Հայ Օգնութեան Փօստը (ՀՕՓ), որ կազմակերպելով այս շրջապտոյտը, քաջալեր հանդիսացեր էր իր ծրագրին՝ որպէսզի կարճ ժամանակամիջոցի մը



# ՀԱԻՍՏԱՐՄՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Երկիր մոլորակի աշխարհում աւանդապաշտ մարդկանց մի երկիր կայ՝ Չրերով շրջապատուած ձաբոն, նրա մարդիկ էլ երկրի անունով ձապոնացիներ: Ասում են՝ արեգակն է զարթնում իրենց սրբազան լեռ Ֆոլկիշիմայի գագաթից, արեւազայի ողջոյն հաղորդում արեւմտեան կողմն աշխարհի մարդկանց, գնում լոյս փուռում երկիր մոլորակի վրայ: Ամէն ուրիշ ազգերի նման՝ նրանք էլ իրենց արարած հաւատքի պաշտամունք ունեն: Վեցերորդ դարում՝ դրացի Չինաստանից իրենց երկիր էր թափանցել Պոլստաեականութեան պաշտամունքը: Չէ, ձապոնի մարդիկ իրենց հաւատքն էին ստեղծել՝ Մի-ՔԱՏՕ (Shinto-ism), «Նախահայրերի ու երկրի շնորհներ»-ի պաշտամունքին նուիրուած հաւատք: Հազար-հազար տարիներ առաջ՝ Արմին-հայերն էլ իրենց նախնիներին պաշտամունք էին նուիրել, երկիր մոլորակի բնութեան երեւոյթները խորհրդանշող աստուածների՝ կրակի, լոյսի, գեղեցկութեան, մայրութեան, ջուրի, սիրերգութեան, յաղթանակի, արուեստների, հիւրընկալութեան պաշտամունք: Չարագործ մարդիկ փլել էին նրանց տաճարները, իրենց պաշտամունքին խորթ հաւատք բերել երկիր: Չկարողացան մարել ոգի դարձած իրենց աստուածների յիշողութիւնը, չկարողացան հանգցնել նրանց հոգիներում նախնիների հաւատքի հրդեհը: Քրմացած բանաստեղծներ՝ վարուստն ու նոր ժամանակների բանաստեղծ վանատուր, իրենց բանաստեղծութիւններում նախնիների արարած աստուածների ճշմարտութեան լոյսը, սրբազան լեռնաշխարհի լեռների խորհուրդն է ճառագում: Նախնիների արարումների հաւատարմութեան յիշողութեան կանխեղն է այն, որը իրենց նախնիներ վառել էին՝ «Արայի Գահ»-Արագած լեռան գագաթին, որ իրենց աստուածների իմաստութեան լոյսը վառ էին աշխարհի մարդկանց սրտերում:

Հայկական Սրբազան Լեռնաշխարհ, չորս հազար քառակուսի քիլոմետր տարածքով, երկինք ճախրող շարան-շարան սպիտակ թագերով լեռներ, կարծես իրար ձեռք բռնած պար գալիս: Իրենց լեռների Արտոս, Նեմրոթ, Վարազ, Թոնդուրեկ, Սիփան եւ այլ գագաթներից կրակ ժայթքում, որպէս ջահեր լոյս փուռում լեռնաշխարհի վրայ, նրա ճամբաներով անցնող մարդկանց երեսներին լոյսի շողեր շարում: Հայկական լեռնաշխարհում, լոյսի լեցուն ժպիտ էր, Արմին-հայերի աստուածների օրհնութեան լեցուն առատութիւն էր: Գիշերներին, այնտեղից անցնող հարաւի Աշշուր աստուծոյ անունով ասորեստանցիներ՝ ապշել էին այդ լուսավառ երկրի տեսքից, նրա լեռների գագաթներից հոսած կրակից: Իրենց աքբատերէն խօսքի «արտու-աշտու = կրակ»՝ անուան իմաստով Արա-արեւ աստուծոյ Արմինա երկիրը՝ կրակի վայր՝ Ուրաշտու-Ուրարտու, անուանել: Արա աստուծոյ անուան «Ար»՝ նախածանցով թագաւորներին, իշխաններին, առանձին մարդկանց, բնակավայրերին անուններ պարգեւել:

Ասորեստանի արքաներ, իրենց սեպագիր նշանների արձանագրութիւններում նոյն անուններով կոչել նաեւ Արմինա երկիր՝ Հայկական Սրբազան Լեռնաշխարհը:

Արարչական էր Հայկական լեռնաշխարհը, նրա մարդիկ «Սրբազան» կոչել էին այն, գուցէ եւ իրենց նախնիների յիշողութեամբ առաջին մարդու ծննդավայր՝ բնակած վայր, «Դրախտավայր» կոչուած երկիրը լինէր: Նոր դարերում, մարդկային հասարակութիւնը այդպէս է անուանել այն եւ նրա աշխարհագրական դիրքն էլ Հայկական լեռնաշխարհում: Բաբելոն, հազար-հազար դարերի նրա քարէ քարտէսին «Արմինա» անունով երկիրն է յիշատակում: Արմին-Հայ իմաստուն մարդիկ, հայկական լեռնաշխարհում են համարել Արմին-Հայ ցեղի ծնունդը, նաեւ բազում տեղանունների յիշատակութեամբ այդ լեռնաշխարհի բնիկ լինելը:

Բնութեան երեւոյթներ՝ կրակին ու լոյսին պաշտամունք նուիրած լեռնաշխարհի մարդկանց պաշտամունքի հնագոյն աստուածը Արան էր, որը նախապէս եղել է հողագործութեան ու բուսականութեան՝ մեռնող ու յարութիւն առնող բնութեան աստուածութիւն: Լեռնաշխարհի Նախեան ցեղերի բնիկ ու անուանադիր աստուածն էր նա: Արա աստուծոյ անունով էին կոչուել լեռնաշխարհի ժողովուրդի ու երկրի՝ «Ար-մե-նի, Ար-մա-նի» անունները՝ «մա-ծնունդ» բառի իմաստով՝ «Ար-Արա» աստուծոյ ծնունդը: Հայկական լեռնաշխարհի շատ տեղանուններ «Ար» անունով են կոչել, լեռնաշխարհի գմբէթ՝ լեռան անունն էլ, կրկնուող «Ար» նախածանցով՝ ԱՐԱՐԱՏ :

«Աստուած», նոյնպէս եղել է Արմին-հայերի հնագոյն աստուածութիւններից մէկը, յետագային, երկրում այլ աստուածների ծնունդով դադարել էր յատուկ անուն լինելուց: Արտաշեսեանների գահակալութեան ատեն, հելլենիզմի տարածումով «Աստուած»-ը նոյնացուել է «Դիոս-Չես»-ի հետ, իսկ քրիստոնէութեան ժամանակ «Յնովա» Աստուծոյ հետ, որպէս երկնային աստուածութիւն: Աստուած (Աստու-ած) անունը որպէս բնիկ աստուածութիւն առնչուած է «աստու-աշտու» կրակ, բառի հետ: Կրակ իմաստով «աստու-աշտու» բառերը, բաղադրիչ մասն են Ուր-աշտու-Ուր-արտու երկրանունն ու կրակապաշտութեան կեդրոն Աշտի-շատ քաղաքանուն: Աստուած անունը գտնուում է նաեւ «Հայասա» պետութեան անուան «աշտու-աշ» դիցանունում: Աստու-ած անուան «աստու» բաղադրիչը Ուր-արտու անուան «արտու» բաղադրիչի բարբառային տարբերակ է: Արտու (Ուր-արտու) անուան «աշտու» (Ուր-աշտու) տարբերակը, Հայերէնի բարբառներում «ր» տառի «շ» տառի հնչիւնափոխութեան արդիւնք է:

Հայկական Սրբազան Լեռնաշխարհին տիրած Պարսիկ ցեղից աքեմենեանների հօր արքայ Դարեհ Առաջինը, Բհուստունի արձանագրութիւնում իր տիրած երկիրը անունանել էր «Արմինա», նրա մարդկանց էլ «Արմին»: Հազար-հազար տարիներ առաջ էլ յոյն իմաստուններ նոյն «Արմին» անու-

նը հնչիւնափոխելով Արմին էին կոչել իրենց, երկիրն էլ Ամէնիա: Երուանդունիների ազգատոհմից սերած Արտաշէս անուշ թագաւորի գահակալութեան ատեն երկիրը կոչել էին Հայաստան, իրենց էլ Հայ: Որոշ պատմաբաններ, այն հիմնաւորել են «Հայասա» պետական կազմաւորման անունից առաջացած լինելը: «Հայ» անունն էլ Հայկ Նահապետի բնակած «Հարք» երկրի անունի «ք»-ն յոգնակի հոլովի, ու «ր» տառը հայկական բարբառներում «յ» տառի հնչիւնափոխութեամբ «Հայ» անուան վերածուել:

Հայկական ընդարձակ լեռնաշխարհը բաժանուել էր երկու մասերի, որոնք պատմական աղբիւրներում «Մեծ Հայք» ու «Փոքր Հայք» են կոչուել: «Մեծ Հայք»-ը ընդգրկում էր հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածքը, իսկ «Փոքր Հայք»-ը նրա հարաւարեւմտեան փոքր Ասիայի արեւելեան մասը: Երկու հայքերի միջեւ, Եփրատ գետով հարաւի դաշտեր հոսում՝ Հայկական լեռնաշխարհի լեռների ու նրանց լանջերից պայթած աղբիւրների ջրերը: Ո՞վ արեւորդի Հայ մարդ, հաւատա՛, Սասունի արեւածին քաղերի պատումին, այդ մի «Պայթած աղբիւրից» է թռել քաղերի-քաղ Անդրանիկի «Ասլան» անունով սպիտակ ձին, նրան մարտի տարել, չթողել տուշմանի ոչ մի գնդակ խոցել իր արեւածին տիրոջը: Եփրատ, Հայոց սրբազան գետ Արածանիի ջրերն են լցում նրա հուն: Եփրատ գետի գլխաւոր վտակ Արածանիի ակերի ճակատամարտ, Տիգրան Արքայի գլխաւորած այրուձիւր վաշտերը խորտակել էին Հռոմի լեգէոնների դէպի մայր ոստան Արտաշատ արշաւող զորքը: Մարտում ընկել էին երեք հազար ու աւելի լեգէոնականներ, հրամանատար Լուկուլլոս հազիւ կարողացել իր նրանց մնացորդացով, նետերի տարափի ահը սրտին, ետ-ետ նայելով՝ փախել «Հայոց Սրբազան Լեռնաշխարհ»-ից, շնորհագրկել էին նրան: Եփրատ, արմինները լաստերով նաւարկել էին հարաւի Միջագետք՝ լեռնաշխարհի գինի, ագնուացեղ ձիեր, բամբակէ գործուածք, երկաթ, պղինձ ու այլ մետաղներ, պտուղներ տարել, կենաց պտուղ ծիրանին անուանել էին «Հայկական ինձոր»: Ետ դարձին, գինու տրկերը ու իրենց փոխանակած պիտանի ապրանքները տարել երկիր: Եփրատի ջրերը, հայոց սրբազան լեռնաշխարհի լեռների լանջերից պայթած գետեր-գետակները կարծես աստուածային ընծայ լինէին նրանց դաշտերին, առանց որի մեռեալ անապատ կը լինէր նաեւ հարաւը:

Մեր թուարկութիւնից հազար-հազար տարիներ առաջ հայկական լեռնաշխարհում կազմաւորուել էին իշխանութիւններ, որոնց նախարարներ էին կոչել: Մեծ Հայք աշխարհն էր եղել հայկական բարձրաւանդակը, Արմին-Հայ ժողովուրդի բնօրրարնը, այնտեղ էր հայոց պետականութիւնը ձեւաւորուել, առայժմ յայտնի Արատտա քաղաք պետութիւնը՝ Հայաստանի Մեծամոր աւանի տարածքում: Արմինա պետութիւն՝ Խալտի-Հայկ աստուծոյ կնոջ անունով Տուշպուէ-Տուշպա-Վան մայր քաղաք: Երուանդունի պետութիւն՝ Արմաւիր-Երուանդաշատ մայր ոստան: Մեծ Հայքի տարածքում Ար-

տաշէս արքայի ստեղծած՝ Արտաշեսեան պետութիւն, իր հիմնադրած մայր ոստան Արտաշատ քաղաք: Խոհեմ ու իմաստուն Արտաշէս արքայ, հրամայել էր Մեծ Հայքի կազմում ընդգրկել այն բոլոր տարածքները, որտեղ Հայերէն էին խօսում: Հայերով լիքը Հայաստան երկիր եղաւ այն: Արեւելք ներխուժած Հռոմըր գահընկեց էր արել Արտաշեսեանների վերջին թագաւոր Տիրանին, պարթեւների հետ համաձայնել իրենք թագադրէին պարթեւ ծագումով Տրդատ-ին, իսկ թագաւորութիւնը կախեալ լինէր նրանցից: Տրդատ, մեծ պահակազուկով հասել Հռոմ, կայսր Ներոնը՝ ի նշան Հայաստանի հետ խաղաղութեան՝ բացել պալատի բոլոր դռները, մեծ հանդիսութեամբ թագադրել Տրդատին, Հայաստանը յայտարարել դաշնակից երկիր, ընծաներով ուղեւորել Հայաստան: Արշակունի թագաւորական հարստութիւն, չորս հարիւր տարիներ իշխել էին Մեծ Հայքում:

Արմինա, Երուանդունի, Արտաշեսեան թագաւորական հարստութիւնների ժամանակ Մեծ Հայքի տարածքը բաժանուել էր տասնհինգ աշխարհների, իմա երկրամասերի, որոնք ըստ Անանիա Շիրակացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի ունէին հետեւեալ անուանումները ու տեղագրութիւնները.

- Բարձր Հայք՝ Կարնոյ երկիրը Չորրորդ Հայք՝ Ծոփաց երկիրը Աղձնիք՝ Տիգրիս գետի վրայ Տորուբերան՝ Տարօնը Մոկք՝ Ասորեստանի մօտ Կորճայք
- Պարսկահայք՝ Ատրպատակացի մօտ
- Վասպուրական՝ Պարսկահայքից հիւսիս-արեւմուտք
- Սիւնիք՝ Երասխ գետի մօտ Արցախ՝ Սիւնիքի մօտ
- Փայտակարան՝ համանուն քաղաքով երկրամաս
- Ուտիք՝ սահմանակից Աղուանքի մօտ Կուր գետով
- Գուգարք՝ Վրաստանի մօտ
- Տայք՝ Եգեթի մօտ
- Այրարատ՝ Գուգարքի ու Տայքի մէջտեղում

Մեծ Հայքի Տասն հինգ երկրամասերը՝ աշխարհները, նկարագրուած են Անանիա Շիրակացու աշխարհացոյցում, սակայն աւելի ընդարձակ հին մատենագրական երկերում ու միջնադարեան ձեռագրերում:

Արի արեւածին Արմին-Հայ մարդ, հաւատարիմ եղիր նախահայրերիդ ու նրանց արարումների յիշողութեանը: Արմախա-Արգիշտի աշխարհակալ արքայի քաղերի վահանների շաշիւնների, Հայկ Նահապետի աղեղից սալացած նետի սլացքի, Բաբելոնի պարիսպները խորտակող Երուանդունի Տիգրանի այրուձիւր վաշտերի գրոհի, հայրենի հողի վրայ կանգնած Արշակի Պարսիկ Շապուհին սպառնալի կանչերի, Մեսրոպի գրերի լոյսի ճաճանչների, Արտազու գաւառի գետի ափին վարդանի ու նրա հետ կուռի ելած քաղերի սուրերի շաշիւնների, Մեծն Տիգրանի Արածանիի ճակատամարտի այրուձիւր ճախրանքի, Անդրանիկի քաղերի հրացաններից պայթած կրակի լոյսի ջահերը վեր պահած՝ ցեղիդ հոգիների տաճարներում նախնիների յիշողութեան հաւատարմութեան կանխեղներ վառիր:



### ՇԻՆՊ ԲԱՆ, ՈՐ ՊԵՏԵ Է ԻՄԱՆԱԼ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

1) Սէրը պատասխանատուութիւն է, ո՛չ թէ իրաւունք: Սէրը պահպանելու համար հարկաւոր է միշտ չիշել անոր մասին, գիտակցել սեփական պատասխանատուութիւնը: Ատիկա նման է մշտապէս պայտասակին մէջ հակաթ տանելուն, երբ պէտք է անընդհատ հետեւիս, որ չկորուրի: Պէտք է անընդհատ մտածէք ձեր գործողութիւններուն մասին, թէ անոնք ինչպէս կ'անդրադառնան սիրելիի վրայ, որ աւելի փխրուն է քան հակաթը: Եթէ պատրաստ չէք իսկական ջանքեր գործադրելու, դժուարին գրոցներ վարելու եւ փոխգիշուամներու դիմելու, ուրեմն պատրաստ չէք սիրոյ պատասխանատուութեան:

Կրնաք պայքարել սիրոյ համար, բայց չէք կրնար ստիպել դիմացինը սիրել ձեզ: Սիրոյ հոլովութիւնը տալու մէջ է, ո՛չ թէ վերցնելու ա՛յն՝ ինչ անհրաժեշտ է ձեզի:

2) Սէրը պէտք է ժամանակի ընթացքին փոխուի- Դուք, վստահաբար, տասը տարի շարունակ միեւնոյն սանտրուածքով չէք կամ նոյն պայտասակը չէք գործածեր: Հաւանաբար, նաեւ ձեր յարաբերութիւններու ոճը փոխելու ժամանակն է...

Շատեր կ'ակնկալեն, որ գուզընկերը կայուն եւ մշտական պիտի ըլլայ, յենարան, քանի դեռ մենք որոնումներու մէջ ենք եւ կը

փորձենք որեւէ նոր բան: Բայց այդպէս ձանձրալի է:

Ձեր յարաբերութիւններուն եւ մէկը միւսին զարգանալու եւ փոփոխութիւններու ազատութիւն տուէք: Ատիկա ընդունեցէք վստահութեամբ, ո՛չ թէ դժգոհութեամբ:

3) Դուք էք, որ սէր կ'ընտրէք: Սիրահարածութիւնը կրնայ անկառավարելի զգացմունք թուիլ, բայց սէրը այն է, ինչ դուք կ'ընտրէք: Դուք որեւէ բան կը զգաք մարդու հանդէպ, բայց միայն դուք կրնաք որոշել, թէ անիկա ինչպէս պիտի ազդէ ձեր կեանքին վրայ: Ամէն օր, ամէն ժամ դուք կ'որոշէք, թէ ինչի պատրաստ էք եւ ինչ պիտի ընէք այդ մարդու համար:

4) Սէրը չի կրնար անցնիլ- Կրնայ անցնիլ իրարու համար որեւէ բան ընելու ձեր ցանկութիւնն ու պատրաստակամութիւնը: Պէտք չէ դուք ձեզ համոզէք, որ տարբեր դարձած էք:

Պարզապէս դադրած էք ջանալէն:

5) Դուք կը կառավարէք սէրը, ո՛չ թէ ան՝ ձեզ- Կ'ըսեն՝ մենք չենք ընտրել մէկը սիրել: Իբր՝ սէրը դաժան է: Բայց ո՛չ: Սէրը ձեր պատասխանատուութիւնն է: Իսկ այն, թէ ով կը սիրէք, կախալ է ձեր ուղեղին, մարմնին եւ հոգիին: Եթէ բնականոն ինքնագնահատական ունիք, լաւ հոգեվիճակ, ուստի կը սիրէք ճիշդ մարդը:

### ԻՆՉՊԵՄ ՊԱՅՊԱՆԵԼ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶԵՐՍՈՒԹԻՒՆԸ

\* **Զգուցէք ամէն օր որեւէ հաճելի բան ընել:** Սուրճ պատրաստեցէք ու մատուցեցէք ձեր ամուսինին, խանութ գացէք ու որեւէ համեղ բան գնեցէք ձեր սիրելիին համար, անոր համար յարմարաւէտ անկողին պատրաստեցէք, այլ ոչ թէ վիճեցէք, թէ աման լուալու կարգը որունն է: Այդ մանրուքներով դուք ցոյց պիտի տաք ձեր սէրը: Նման ուշադրութիւն ու հոգատարութիւն պէտք է մեզմէ իւրաքանչիւրին:

\* **Ստեղծեցէք ձեր աւանդոյթներն ու սովորոյթները:** Աւանդոյթները ընտանեկան մշակոյթի մէկ մասն են, որոնք անհրաժեշտ են առողջ երկարեակէտ յարաբերութիւններու համար: Ատիկա կրնայ ըլլալ որեւէ բան, օրինակ՝ ամէն կիրակի սիրելիի գինի ու պանիր գնելը, միասին շարժանկար մը դիտելը, առաւօտեան քանի մը վազրկեան իրար գրկած պառկիլը, միասին երեխաներուն քնանալէ առաջ հեքիաթ կարդալը:

Որեւէ բան՝ նոյնիսկ ամենաառօրեայ զբաղմունքը կարելի է աւանդոյթի վերածել ու անոնք ձեռք կը բերեն յատուկ նշանակութիւն:

\* **Մի՛ մոռնաք «չնորհակալութիւն» ըսել:** Մի մոռնաք ձեր սիրելի անձնաւորութեան շնորհա-

կալութիւն ըսել, նոյնիսկ եթէ ձեր յարաբերութիւններուն մէջ լաւագոյն ժամանակաշրջանը չէ:

Շնորհակալութիւնը նոյն սէրն է՝ այլ բառերով արտայայտուած: Հնարաւորինս յաճախ ըսէք այդ բառը:

\* **Միծաղեցէք միասին:** Ի՞նչը կրնայ աւելի հաճելի ըլլալ, քան սիրելի մարդու ժպիտն ու ծիծաղը: Կատակեցէք միասին, խաղցէք երեխաներու նման:

«Աւելի շատ ծիծաղիր, նոյնիսկ եթէ անոր պատճառով դէմքդ ծածկուի կնճիռներով: Կարեւորը որ դուն երջանիկ ըլլաս», ըսած էր ժամանակին իմաստուն տղամարդ մը իր սիրելի կնոջ:

\* **Զրուցեցէք:** Որքան ալ ծանր օր ըլլայ՝ պարտադիր ժամանակ գտէք իրարու հետ զրուցելու համար: Պատմեցէք, թէ ինչ տեղի ունեցած է ձեր կեանքին մէջ:

Որեւէ յարաբերութեան մէջ կան ճգնաժամեր, պարզապէս չիշեցէք, որ յարաբերութիւնները աշխատանք կը պահանջեն:

Ձանոնք պէտք է սնել ու ջրել, բոյսերու նման, որովհետեւ անոնք լոյս ու թթուածին կը պահանջեն: Որքան ալ դժուար իրավիճակ ըլլայ՝ միասին գայն յաղթահարելը աւելի դիւրին է:

### ԵՕԹԸ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ԲԱՐԵԼԱԻՆ ԶԵՐ ԿԵԱՆՔԸ

1) **Օրը հնարաւորինս շուտ սկսէք** - Գրեթէ բոլոր յաջողակ մարդիկ առաւօտեան կանուխ կ'արթնան, որպէսզի աւելի շատ ժամանակ ունենան օրուան ծրագիրներուն պատրաստուելու համար:

Սկիզբը հաւանաբար դժուար ու տհաճ ըլլայ, բայց եթէ յաղթահարէք սկզբնական բարդութիւնները, կանուխ արթննալը սովորութիւն կը դառնայ: Կրնաք ամէն օր 15 վազրկեան շուտ արթննալ ու աստիճանաբար աւելցնել այդ ժամանակը:

2) **Ընթերցեցէք օրական գոնէ կէս ժամ** - Ինքնագրագացման մէջ կատարուող ներդրումը ամենակարեւոր նախապայմաններէն է կեանքի մէջ արդիւնքի հասնելու համար: Մարդոց կ'առանձնացնեն անոնց գիտելիքներն ու հմտութիւնները: Անոնց շնորհիւ կը ձեւաւորուի անհատը: Ընթերցանութիւնը լաւագոյն ու ամենադիւրին միջոցն է աշխարհայեացքը, սովորութիւններն ու կեանքի որակը փոխելու համար: Զեզի համար կանոն դարձուցէք օրական գոնէ կէս ժամ ընթերցելը: Ընդլայնեցէք ձեր գիտելիքները ու ձեր առջեւ նորանոր դռներ պիտի բացուին:

3) **«Հինգի կանոնը»** - Հզօր մեթոտաբանութիւն, որ ժամանակի ընթացքին մեծ արդիւնք կ'ապահովէ: Երազանքներուն գիրկը ինչալու փոխարէն, ամէն օր որեւէ կարեւոր բան մը ըրէք, որպէսզի ժամանակի ընթացքին ցանկալի արդիւնքի հասնիք: Ամէն օր գրի առէք 5 բան, զոր պէտք է ընէք, որպէսզի հասնիք ձեր նպատակին: Եթէ ժամանակը ներէ՛ կրնաք նաեւ աւելի շատ բան ընել: Բայց անոնք պէտք է ըլլան այն բաները, որոնք ձեզ կ'առաջնորդեն դէպի ձեր նպատակին իրագործումը:

4) **Գովեցէք ուրիշները, հաճոյախօսութիւն ըրէք** - Գովասանքն ու հաճոյախօսութիւնները կը լաւացնեն ձեզ շրջապատող ուժը, բայց անոնք պէտք է սրտէն բխին:

արարքներուն եւ վարմունքին վրայ:

6. Ֆիզիքական մտերմութիւնը պահպանել: Գիտական հետազոտութիւնները պարզած են թէ ֆիզիքական հաղորդակցութիւնը կը բարձրացնէ հաճոյք պատճառող եւ ընկճուածութեան դէմ պայքարող հորմոններու քանակը:

7. Իւրաքանչիւր առաւօտ լաւ խօսքերով դիմաւորել գիրար: Առօրեայ կեանքի ճնշուածութիւնը եւ տաղտուկները, ինչպէս նաեւ անպարանօք վիճակը կրնան պատճառ դառնալ, որ յատկապէս առաւօտեան ուշադրութիւն չդարձնէք մեր կողակիցին: Սակայն, ուրախ գոյգերը չեն մոռնար դրական խօսքեր ուղղել իրենց կողակիցին՝ նախքան աշխատանքի մեկնիլը:

8. Ամէն գիշեր նախքան քնանալը գիշեր բարի ըսել: Ըստ հոգեբաններու, «Գիշեր բարի» ըսելու սովորութիւնը կարեւոր բանալի է ստեղծելու նոյնանման հետաքրքրութիւններ, որպէսզի իւրաքանչիւր անձ չկորսուի իր անձնական աշխարհին մէջ՝ մոռնալով իր կողակիցը:

9. Զրուան ընթացքին ստուգել «կացութիւնը»: Կարեւոր է, շարունակական կապի մէջ մնալ կողակիցին հետ ստուգելու համար անոր հոգեկան վիճակը: Երկար ժամանակ կապի բացակայութիւնը կրնայ անակնկալներու առջեւ դնել մեզ հանդիպման ժամանակ:

10. Հպարտ ըլլալ կողակիցով: Որքան կարեւոր է յարաբերութեան յաջողութիւնը այնքան կարեւոր է կողակիցներու անհատական ուրախութիւնն ու հանգստութիւնը: Մեր կողակիցը պէտք է ըլլայ մեր հպարտութեան աղբիւրներէն մէկը: Հպարտութիւնը կը վերանորոգէ սիրոյ, մտերմութեան եւ երջանկութեան զգացումները:

Եթէ ձեւացնէք՝ հակառակ արդիւնքը կու տան: Իսկական առաջնորդները միշտ կը գովեն իրենց խմբակիցներուն աշխատանքը: Փորձեցէք միշտ նկատել ու գնահատել մարդոց դրական կողմերը, այդ պարագային գովասանքը անկեղծ պիտի ըլլայ:

5) **Կատարեցէք ձեր խոստումները** - «Հեղինակութիւն կը կառուցեն քսան տարուան ընթացքին, բայց կրնան քանդուիլ ընդամէնը հինգ վազրկեանի մէջ: Եթէ միշտ չիշէք այդ մասին, այլ կերպ պիտի գործէք», ըսած է Ուեբըրը Պաֆեթը: Ատոր համար ալ պէտք է կատարել բոլոր խոստումները, թէ՛ կեանքի մէջ, թէ՛ աշխատանքի: Ոչ ոք կը վստահի անոնց, որոնք կը խախտեն իրենց խոստումները: Եւ ձեր առջեւ դրուած նպատակներն ալ խոստումներ են, զորս դուք կու տաք դուք ձեզի: Երբեք մի մոռնաք ու մի անտեսէք գանոնք:

6) **Դուք չէք կրնար միակ ընել ամէն ինչ** - Ոմանք կ'ըսեն, որ իրենք միակ, ինքնուրոյն հասած են ամէն ինչի, ատիկա ճիշդ չէ: Յիշեցէք այն կրթութիւնը, որ ձեզի տուած են ձեր ծնողները, կամ սէրը, որովով ձեզ շրջապատած են ձեր հարազատներն ու մտերիմները: Ոչ ոք միակ յաջողութեան կը հասնի: Գնահատեցէք ու երբեք մի մոռնաք ձեզ օգնողները, ձեր խմբակիցներն ու բոլոր անոնց, որոնց շնորհիւ դուք հասած էք այնտեղ, ուր կ'ուզէիք հասնիլ: Յաջողութեան գրաւականը ուժեղ խումբն է:

7) **Ձեր ունեցածը կիսեցէք ուրիշներու հետ** - Մարդիկ յաճախ նուիրատուութիւններ կ'ընեն: Հաւանաբար մտածէք, որ անոնք հարուստներն են: Բայց նուիրատուութեան ու բարեգործութեան սովորութիւնը պէտք է դաստիարակել՝ մինչեւ հարստանալը: Իր քիչ ունեցածէն ուրիշին շտուղը՝ շատ ունենալու պարագային ալ պիտի չուզէ տալ: ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ՈՒՐԱՆ ԶՈՅԳԵՐՈՒ 10 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նոյն ժամանակ քնանալ: Բոլոր գոյգերը իրենց յարաբերութեան սկիզբի հանգրուաններուն կը փափաքին նոյն ժամանակ քնանալ, նոյնիսկ երբ անոնց աշխատանքային ժամերը տարբեր ըլլան: Ըստ հոգեբաններուն, այս սովորութիւնը պէտք է պահպանուի մինչեւ վերջ, որովհետեւ ան կը ստեղծէ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեբանական մտերմութիւն:

2. Նոյնանման հետաքրքրութիւններ մշակել: Իւրաքանչիւր անձ տարբեր է միւսէն եւ այս տարբերութիւնն է, որ կը ստեղծէ անհատի մը «ես»ը: Սակայն չափազանց տարբերութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ յարաբերութեան վրայ: Յարատեւ ջանքերով եւ փոխ գիշումներով կարելի է ստեղծել նոյնանման հետաքրքրութիւններ, որպէսզի իւրաքանչիւր անձ չկորսուի իր անձնական աշխարհին մէջ՝ մոռնալով իր կողակիցը:

3. Զեռքերը բռնած կամ կողք կողքի քալել: Թէեւ նման երեւոյթ մը աւելի սովորական է նորակազմ գոյգերու մօտ, ձեռք բռնելու կամ կողք կողքի քալելու սովորութիւնը չի վնասեր մնացեալ գոյգերուն: Ուրախ գոյգերը կ'անդրադառնան այս սովորութեան կարեւորութեան:

4. Վստահիլ եւ ներել: Անհամաձայնութիւնները անխուսափելի են յարաբերութեան մէջ, սակայն հարցերը լուծելու ամէնէն արդիւնաւէտ միջոցներէն է վստահութեամբ եւ ներելով զայն աւարտելը:

5. Կեդրոնանալ դրական կէտերուն վրայ: Զոյգերու մօտ երբեմն կը յառաջանայ կողակիցին սխալներուն անդրադառնալու եւ անոնց վրայ կեդրոնանալու սովորութիւնը: Ուրախ գոյգերը նաեւ կը կեդրոնանան իրենց կողակիցի դրական



# ՄԱՐԶԱԿԱՆ

## Իբրահիմովիչ. «Չէի Կարող Խախտել Աւանդոյթը»

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» «Լոս Անճելոս Գեյթսի» տեղափոխուած Զլատան Իբրահիմովիչն ամերիկեան ակումբում տպաւորիչ նորամուտից յետոյ կիսուեց տպաւորութիւններով:



MLS-ում շուէտ յարձակուողի նորամուտի խաղում «Լոս Անճելոս Գեյթսին» 4:3 հաշուով գերկամային յաղթանակ տարաւ լիգայի նորեկ «Լոս Անճելոսին» նկատմամբ, իսկ Իբրահիմովիչը փոխարինման դուրս եկաւ 71-րդ րոպէին եւ խփեց դաշտի տէրերի երրորդ ու չորրորդ գոլերը:

«Ես միշտ կող եմ խփում նորամուտիս խաղում եւ չէի պատրաստուում խախտել աւանդոյթը: Երբ թիմը պարտուում է 0:3 հաշուով, ուղեղը սկսում է աւելի ակտիւ աշխատել, որպէսզի շտկի իրավիճակը: Երկրպագուները պահանջում էին Զլատանին, եւ ես տուեցի նրանց Զլատանին: Ինձ համար հեշտ է խաղալ այստեղ, սակայն պէտք է դրական պահեր ապրեմ թիմի հետ, որպէսզի աւելի մտերմանամ», - 36-ամեայ Իբրահիմովիչի խօսքը մեջբերում է Fox-ը:

Յիշեցնենք, որ մինչեւ 61-րդ րոպէն հիւրերը յաղթում էին 3:0 հաշուով, սակայն «Լոս Անճելոս Գեյթսին» դարձաւ ֆանտաստիկ «քամբեքի» հեղինակ: «Լոս Անճելոսի» ուրուգուահայ յարձակուող Դիեգո Ռոսին մեկնարկային կազմում հանդէս եկաւ առանց փոխարինման եւ դարձաւ կողային փոխանցման հեղինակ:

Զլատան Իբրահիմովիչն օրեր առաջ խփել էր անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» հետ պայմանագիրը եւ տեղափոխուել ԱՄՆ:

Շուեդիայի հաւաքականի նախկին աւագի պայմանագիրը «Լոս Անճելոս Գեյթսի» հետ նախատեսուում է մինչեւ 2019 թուականի աւարտը, իսկ նրա տարեկան աշխատավարձը կը կազմի 1.6 միլիոն եւրօ:

## ՊՍԺ-ն 5-րդ Տարին Անընդմէջ Նուաճեց Ֆրանսական Լիգայի Գաւաթը



Փարիզի ՊՍԺ-ն 5-րդ տարին անընդմէջ դարձաւ ֆուտպոլի Ֆրանսական լիգայի գաւաթի խաղարկութեան յաղթող:

Բորդոյում կայացած եզրափակիչում Ունայի Էմերիի գլխավորած թիմը 3:0 հաշուով վստահ յաղթանակ տարաւ Ֆրանսայի գործող ախոյեան «Մոնակոյի» նկատմամբ: Դուբլի հեղինակ դարձաւ ՊՍԺ-ի ուրուգուացի յարձակուող Էդինսոն Կավանին, մէկ անգամ էլ աչքի ընկաւ արժենթինացի կիսապաշտպան Անխել Դի Մարիան:

Եզրափակիչ խաղի լաւագոյն ֆուտպոլիստ ճանաչուեց ՊՍԺ-ի ֆրանսացի յարձակուող Կիլիան Մբապէն:

ՊՍԺ-ն ռեկորդային 8-րդ անգամ նուաճեց Ֆրանսական լիգայի գաւաթը: Փարիզցիներն այս մրցաշարում յաղթել էին նաեւ 1994/95, 1997/98, 2007/08, 2013/14, 2014/15, 2015/16 եւ 2016/17 մրցաշրջաններում:

Յատկանշական է, որ ՊՍԺ-ին նուաճել է Ֆրանսայում վիճարկուած վերջին 18 տիտղոսներից 16-ը:

## «Մանչեսթեր Սիթին» Առանց Խնդիրների

Անգլիական Պրեմիեր լիգայի 32-րդ տուրում առաջատար «Մանչեսթեր Սիթին» Լիւերպոլում 3:1 հաշուով առաւելութեան հասաւ «Էվերտոնին» նկատմամբ: Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը բոլոր կողերը խփեց առաջին խաղակէստում:

«Մանչեսթեր Սիթին» մրցաշարային աղիւսակը գլխավորում է 84 միաւորով: Երկրորդ տեղում գտնուող «Մանչեսթեր Յունայթեդն» ունի 68 միաւոր, իսկ լաւագոյն եռեակը եզրափակող «Լիւերպոլը»՝ 66:

## «Տոտենհեմը» Կամային Յաղթանակ Տարաւ «Չելսիի» Նկատմամբ

Անգլիական Պրեմիեր լիգայի 32-րդ տուրի վերջին խաղում «Չելսին» տանը 1:3 հաշուով պարտուեց «Տոտենհեմին», որը տարաւ կամային յաղթանակ: Առաջին խաղակէսն աւարտուեց 1:1 հաշուով, իսկ հիւրերին ընդմիջումից յետոյ յաղթանակ բերեց Դեյվ Ալլիի դուբլը: Անգլիացի կիսապաշտպանը 2 կոլ խփեց 4 րոպէում:

«Տոտենհեմը» 64 միաւորով չորրորդ տեղում է, իսկ «Չելսին» 5-րդն է՝ 56 միաւոր:

## «Ռեալը» Խոշոր Հաշուով Յաղթեց Առանց Առաջատարների

Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 30-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» ոչ հիմնական կազմով 3:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Լաս Պալմասի» նկատմամբ: Արքայական ակումբից դուբլի հեղինակ դարձաւ ուելսցի կիսապաշտպան Գարեթ Բեյլը, որը կոլերից մէկը խփեց 11 մետրանոցից: Ֆրանսացի յարձակուող Քարիմ Բենզեման եւս աչքի ընկաւ 11 մետրանոց հարուածով:

Յիշեցնենք, որ այս խաղում «Ռեալը» չէր յայտաւորել մի շարք առանցքային ֆուտպոլիստների, քանի որ պատրաստուում է Թուրքիի «Եուվենտուսի» դէմ Ախոյեանների լիգայի քառորդ եզրափակիչի առաջին խաղին (ապրիլի 4-ին):

Զինդին Զիդանի գլխավորած թիմը 63 միաւորով երրորդն է եւ մէկ միաւոր է հետ երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյից», որը դեռ չի անցկացրել այս տուրի հանդիպումը:

## «Բարսելոնան» Մէկ Րոպէում Խփեց 2 Կոլ Եւ Պարտութիւնից Փրկուեց Սեւիլայում

Սպանական Պրիմերայի 30-րդ տուրում առաջատար «Բարսելոնան» արտագնայ հանդիպում անցկացրեց «Սեւիլայի» հետ եւ վերջնամասում պարտութիւնից փրկուեց 1 րոպէում խփած 2 կոլերի շնորհիւ՝ 2:2:

Մինչեւ 88-րդ րոպէն «Սեւիլան» յաղթում էր 2:0 հաշուով, սակայն չկարողացաւ պահպանել առաւելութիւնը: «Բարսելոնայի» կազմում հաշիւը կրճատեց ուրուգուացի յարձակուող Լուիս Սուարեսը, իսկ կատալոնական ակումբին պարտութիւնից փրկեց Լիոնել Մեսին: Արժենթինացի յարձակուողը փոխարինման էր դուրս եկել 58-րդ րոպէին եւ 26-րդ կոլը խփեց Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում:

«Բարսելոնան» ունի 76 միաւոր եւ 12 միաւոր է առաջ երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյից», որը մէկ խաղ պակաս է անցկացրել: Մադրիդի «Ռեալը» հաւաքել է 63 միաւոր, իսկ «Սեւիլան» 46 միաւորով 6-րդն է:

## Հենրիխ Մխիթարեանը Ստացել Է «Արսենալի» Ամսուայ Լաւագոյն Ֆուտպոլիստի Մրցանակը

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը ճանաչուել է Լոնտոնի «Արսենալի»՝ Մարտ ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստ, յայտնուում է ակումբի մամուլի ծառայութիւնը:



Քուէարկութեան արդիւնքում 29-ամեայ Մխիթարեանն առաջ է անցել միւս 3 թեկնածուներից՝ գերմանացի Մեսութ Օզիլից, ուելսցի Աարոն Ռեմզիից ու բոսնիացի Գրանիտ Զակայից:

Հայ կիսապաշտպանն «Արսենալի» ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստի մրցանակը ստացել է «Սթոք Սիթիի» դէմ անգլիական Պրեմիեր լիգայի 32-րդ տուրի հանդիպումից առաջ: Ապրիլի 1-ին կայացած խաղում լոնտոնեան ակումբը յաղթել էր 3:0 հաշուով, իսկ Հենրիխը փոխարինման էր դուրս եկել 76-րդ րոպէին:

Յիշեցնենք, որ Մարտ ամսին Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» կազմում բոլոր մրցաշարերում մասնակցել է 5 խաղի եւ դարձել 2 կոլի ու մէկ կոլային փոխանցման հեղինակ:

## ԵԱ. Նարեկ Մանասեանը՝ Պրոնգէ Սետալակիր

Հայաստանի ներկայացուցիչ Նարեկ Մանասեանը պրոնգէ մետալակիր է դարձել Ռուսիայում աւարտին մօտեցող բռնցքամարտի Եւրոպայի 18-22 տարեկանների առաջնութիւնում:



91 կգ քաշային կարգի կիսաեզրափակիչում հայ բռնցքամարտիկը պարտուել է Ռուսաստանի ներկայացուցիչին եւ գրաւել երրորդ տեղ, յայտնուում է Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը:

Յիշեցնենք, որ Հայաստանի միւս ներկայացուցիչը պայքարը լքել էին նախորդ փուլերում:



### ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մասունքի քառասունքին առթիւ փաստինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 29 Ապրիլ 2018ին:

- Սգակիրներ՝
  - Այրի Տիկին Ժողէֆին Գուգուեան
  - Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարգրիտ Գուգուեան եւ զաւակները
  - Այրի Տիկին Ժիւլիէթ Աւագեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Մարինա Գուգուեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Մովսէս եւ Տալիտա Խաչատուրեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Ճորճ Գուգուեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Սարգիս Գուգուեան եւ զաւակները
  - Այրի Տիկ. Լիտիա Տէօքմէճեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Լենա Սարգիս եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Յովսէփ Գուգուեան
  - Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ զաւակները
  - Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Գարոլին Սամուէլեան եւ դուստրը
  - Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Թալին Լապայեան
  - Տէր եւ Տիկ. Եագուպ եւ Սիլվի Գուգուեան
  - Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հեքիմեան
- Հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Catering and Banquet սրահին մէջ, 3887 E Sierra Madre Blvd, Pasadena, CA 91107:

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 8-էն

առաքելութիւնն է յոյս ցանել, ժպիտներ քաղել, երազներ իրականացնել, սովածը կերակրել եւ հոգիներ փրկել:» Խանձեան աւարտեց իր խօսքը շնորհակալութիւն յայտնելով բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումն ունեցած էին այս պատմական ու յիշարժան սոնախմբութեան իրագործման մէջ:

Երեկոյի ընթացքին յարգանքի տուրք մատուցուեցաւ Ընկերակցութեան նախկին Գործադիր Տնօրէն՝ հանգուցեալ Վեր. Դոկտ. Մովսէս ճանապարհանին, իր հաւատարիմ ծառայութեան համար, ինչպէս նաեւ 18 տարի առաջ Աւստրալիոյ մէջ Աւետարանչական Ընկերակցութեան մասնաճիւղ մը բանալու իր մտադրացման համար: Այս առթիւ՝ ՆՕՏՏ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի Վեր. ճանապարհանի ուղղած կոնդակը ընթերցեց Վեր. Դոկտ. Գրիգոր Եւոմշաճըզեան, ապա զայն յանձնեց Վեր. ճանապարհանի տիկնոջ՝ Լուիզա ճանապարհանին: Ընտանիքին անունով, Վահագ ճանապարհան շնորհակալութիւն յայտնեց իր հօր յիշատակը վեր առնող այս յատուկ յարգանքին համար: Հանգուցեալ Վեր. Մովսէս ճանապարհանին եղբայրը՝ Յակոբ ճանապարհան, որ չէր կրցած ներկայ գտնուիլ հանդիսութեան, ճարտարօրէն յայտնեց իր երախտագիտութիւնը տեսագրութեան միջոցով, զորս ցուցադրուեցաւ պատասառի վրայ: Վեր. Դոկտ. Եւոմշաճըզեան,

Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան անունով փորագիր յուշանուէրներ փոխանցեց բարերարներուն, նուիրատուներուն, հիւրերուն, ինչպէս նաեւ Պրն. Յարութիւնեանին, որ կատարած էր այս ճամբորդութիւնը միանալու Աւետարանչականի հարիւրամեակի սոնակատարութիւններուն:

Իր փակման խօսքին մէջ, Պրն. Յարութիւնեան անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեց Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Արցախի Հանրապետութիւնը ներկայացնելու սոյն հրաւերին համար եւ խօսեցաւ Արցախի ներկայ դրութեան մասին: Ան ըսաւ. «Ես բարձր կը գնահատեմ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Արցախի մէջ կատարած աշխատանքները եւ յատկապէս այն գործը որ կը կատարէ Արցախի երեխաներու բարօրութեան համար, որոնք են մեր ապագան»:

Երեկոն աւարտեցաւ Տէրունական Աղօթքի երգեցողութեամբ եւ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Նախագահ Վեր. Պերճ ճամապարհանի Առաքելական Օրհնութեամբ:

Շաբթուան ընթացքին, արտասահմանի հիւրերը պաշտօնական այցելութիւններ կատարեցին Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդ Եպիսկոպոս Նաճարեանին, Կաթողիկէ Եկեղեցւոյ Պատրիարքական Փոխանորդ Հայր Սուսանեանին, ինչպէս նաեւ Համազգային Գօլատրն ձեմարանի եւ ՀՔԸՄ Ալէքսանտր վարժարանի Տնօրէնութեան:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԱՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՒՆ ՀԵՏ

Շարունակուած էջ 15-էն

մէջ կարենար առաւելագոյն չափով իրագործել իր երազը:

Մեր սրտբաց զրոյցին ընթացքին Շահան անդրադարձաւ նաեւ մարդկային յարաբերութեան մասին: Ան արժեւորեց անհատներու միջեւ գոյութիւն ունեցող փոխադարձ վստահութեան եւ հատուկ ներկայութիւնը: Շեշտեց նաեւ թէ կեանքի մէջ որքան կարեւոր է մեր շուրջը ունենալ այնպիսի անձ կամ անձեր, որոնց հետ ամէնէն աննշան եւ անկարեւոր նկատուած առօրեայ հարցերու մասին իսկ կարելի է առանց վերապահութեան կամ անկաշկանդ խօսիլ եւ մտքերու փոխանակութիւն ունենալ:

Յատուկ յարգանքով, հաւատքով եւ սիրով կը յիշէ հայրենի վաստակաւոր երաժիշտ՝ Եղուարդ Միրզոյեանի ներկայութիւնը իր կեանքին մէջ:

Ուրախ ենք լսելու թէ, Մայիս 18, 2018-ին Վարդանանց Ասպետներու կազմակերպած յատուկ յայտագրով Նիւ Եորք- Նիւ ձըրզիի համայնքին արուեստասէրները ներկայ պիտի ըլլան բազմատաղանդ Շահան Արծրունի արուեստագետին մեծարման հանդիսութեան, ինչպէս նաեւ նոյն օրը պիտի մեծարուի մեզի ծանօթ անուն՝ Կոմիտաս երգչախումբի վաստակաւոր խմբավար՝ Քրիս Գալֆայեանը:

\*\*\*\*\*

Մեր երկրագունդի գրեթէ բոլոր ցամաքամասերուն մէջ իր ելոյթներով փայլող, իր ձայնասփռումներով գերազանց տպաւորութիւն ձգող Շահան Արծրունի երաժշտագէտը անկուշտ-անհանդարտ պրպտողն ու միաժամանակ լոյս սփռողն է մեր երաժշտական աշ-

խարհի ազգային հարստութիւններուն:

Երկրագունդի գրեթէ բոլոր ցամաքամասերուն մէջ իր ելոյթներով Շահան Արծրունին եղած է եւ կը շարունակէ ըլլալ դեսպանը հայ երաժշտութեան տարածման: Իր փայլուն ելոյթներուն եւ գործունէութեան շնորհիւ բնականաբար արժանացած է զանազան պատուաբեր գնահատականներու եւ շքանշաններու: Հոս կ'արժէ յիշել Վեհափառ Հայր Գարեգին Ա. Սարգիսեանին շնորհած Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Մեսալը (1996-ին), իսկ 2015-ին ՀՀ Նախագահական Մովսէս Խորենացի Շքանշանի պարգևատրութիւնը:

Շահան Արծրունիին ամէնէն մեծ գնահատականը սակայն պիտի ըլլայ իր երազը իրականացնող ութը խտասալիկներու ձայնագրութեան ամբողջացումը, հայրենի մանուկներուն երաժշտական պատրաստութիւնը եւ իր տարիներուն թացքին կուտակած փորձառութիւններուն փոխանցումը նոր սերունդին:

Արծրունի պատրաստ նիւթերով հարուստ պաշար մը ունի, պէ՛տք է որ այդ բոլորը համայնքէ համայնք լսուի, փոխանցուի... Իր մէջ ամբարուած մասնագիտական հարուստ գիտելիքները անհրաժեշտ է, որ ամէն գնով փոխանցուին նոր սերունդին:

Բարի երթ եւ ծրագիրներու իրականացում կը մաղթենք Հայ Ժողովուրդի ծոցէն ծլած-հասակ առած, աշխարհատարած համբաւ վայելող մեր տաղանդաւոր դաշնակահար, երաժիշտ ՇԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՒՆ:

Տեսակցութիւնը գրի առաւ եւ ամփոփեց՝ Զարմինէ Պօղոսեան

### ԱՐՄԷՆ ԱՆԱՍԵԱՆ ՄԻՇՏ ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱՅ

Շարունակուած էջ 13-էն

Ծափերի արժանացան երաժիշտները Խաչատրեանի կոնցերտի կատարումից յետոյ: Խելալեղ կատարում էր Արմենի մեկնաբանումը. Իսկական հայկական, անմնացորդ հայրենի կատարում, որը հպարտութեան ալիք բարձրացրեց ունկնդիրներին հոգիներում: Ունկնդիրներին որոտընդոստ ծափերի տակ Արմէնը առանց նուագակցութեան կատարեց Կոմիտասի «Կոռնակ»-ը՝ արցունքի կաթիլներ քամելով ունկնդիրներին աչքերից:

Ներհուն մտաւորական, անուանի լրագրող Օշին Քէշիշեանը չկարողանալով զսպել իր ոգեւորութիւնը, բարձրաձայն ասաց. - ո՛ւր է այս տղան, ինչո՞ւ յաճախ չենք տեսնար սա տղան մեծ բեմերու վրայ, մինչ օտարներ կը վայելեն մեր տաղանդները-

Իրաւունք ունի, չես կարող առարկել:

Ապրիլ ամսուայ երկրորդ շաբաթուայ ընթացքին Արմէն Անասեանը Սիբեիլիոսի կոնցերտը կատարելու է Ռուսիայի Տիմիշորա քաղաքի սիմֆոնիկ նուագախումբի հետ, իսկ Խաչատրեանի կոնցերտը՝ Բուխարեստի ռադիոյի եւ հեռու-

տատեսութեան սիմֆոնիկ նուագախումբի հետ: Նոյն համերգին, որպէս դիրիժոր ղեկավարելու է Արամ Խաչատրեանի Սիւլիտը՝ «Սպարտակ» բալետից: Յետագայ օրերին նոյն նուագախումբի հետ ձայնագրելու է Խաչատրեանի Չուլթակի կոնցերտը՝ խտասալիկի վրայ: Իսկ մենք այստեղ կարօտ ենք ազնիւ, մաքուր դասական երաժշտութիւն լսելու: Ճիշդ է, նման ձեռնարկներ իրականացնելը բաւական ծախսալից է, բայց չէ՞ որ կարելի է միջոցներ գտնել Լոսանջելեսահայ համայնքին էլ իրազեկ դարձնելու մեր տաղանդաւոր արուեստագէտներին: Հենց այդ մտահոգութիւններով էր պարուրուած Օշին Քէշիշեանի ելոյթը արդէն համերգից յետոյ, ինչոյքի սեղանի շուրջ:

Արմէնի հետ ունեցած զրոյցից յայտնի դարձաւ, որ նա բազմիցս կատարել է Խաչատրեանի Չուլթակի կոնցերտը: Մէկ անգամ Երեւանում՝ հօր, Հենրիկ Անասեանի ղեկավարութեամբ, Կալիֆորնիայի Ֆիլհարմոնիկ նուագախումբի հետ, երկու անգամ էլ՝ Գերմանիայում:

Ի՞նչ էք կարծում, չ'արժէ մէկ անգամ էլ նրան լսելու պատուին արժանացնել մեր լայնահոծ համայնքի երաժշտասէրներին: Կ'արժէ:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

**Save Support Sustain**  
Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948  
www.syrianarmenianrelieffund.org





# ԱՐԻԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻ

## Ապրիլ 24

ԿԷՍՕՐՈՒԱՆ 12 ԻՆ

Փան Փասիֆիք Փարքէն

7600 BEVERLY BLVD, LOS ANGELES

Թրքական Հիւպատոսարան

Հանրակարգերը պիտի մեկնին  
առաւօտեան ժամը 11:30 ին

ԿԼԵՆՏԷՅԼԷՆ

ՊԸՐՊԵՆՔԷՆ

ԼԱ ՔՐԵՍԷՆԹԱ/ԹԱՀԱՆԿԱԷՆ

ՓԱՍԱՏԻՆԱԷՆ

ՄՈՆԹԵՊԵԼԼՈՒՆ

ՀՈԼԻՎՈՒՏԷՆ

ՆՈՐԹ ՀՈԼՎՈՒՏԷՆ

ԷՆՍԻՆՈՒՆ

ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ/ՎԱՆ ՆԱՅԶԷՆ

Փոխադրամիջոցներ Ապահովելու եւ  
Յաւելեալ Տեղեկութիւններու համար  
Հեռաձայնեցէք 888 924 1915 թիւին:

